№ 232 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1909 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 232

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 228.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)

Նոյեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 2 ռուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ:

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ՊՈՐՏՐԵՏԻՍՏ
ԼԵՈՆ
Ընդունում է մեծադիր պորտրէտների պատուէրներ ամեն տեսակ լուսանկար պատկերներից:
ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
Հասցէն՝ Гановск. ул. № 7, Художественное портретное Ателье „Леонъ".
◆ Նոյն արուեստանոցում ընդունվում են աշակերտ-աշակերտուհիներ
ՍՈՎՈՐԵԼՈՒ ՌԵՏՈՒՇ
ձեռնտու պայմաններով:
(հ.հ.կ.) (առ.) 1112. 3—1

ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ԵՒ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՓՈԽԱԴՐՈՂ
Կ. Յ. ԱՒԱԳԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.
ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
սրանով յայտնում է, որ գրասենեակի նախկին ծառայողներ և վերջին երկու տարին գրասենեակին ընկեր դարձած ԱՐՏԱՇԷՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ ՍԻՒՏՃԵԱՆ և ԹԷՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՏԷՐ-ԳԷՈՐԳԵԱՆԸ հեռացել են գրասենեակի ընկերութեան գործերից, առաջինը ներկայ տարվայ սեպտեմբ. 20-ից, երկրորդը՝ հոկտեմբերի 15-ից, և այլ ևս չեն հաշվվում ընկերներ:
Այդ պատճառով խնդրվում է գրասենեակի հետ գործ ունեցողներից՝ Արտաշէս Սիւտճեանի և Թէոս Տէր-Գէորգեանի հետ չը կատարել ոչ մի առևտրական գործառնութիւն:
Սրանով ոչնչացնում եմ 1905 Թւից Արտաշէս Սիւտճեանի անունով տրված հաւատարմաթուղթը և բոլոր այն թղթերը, որոնք զանազան ժամանակամիջոցում տուել եմ նրան: Կարապետ Յովհ. Աւագեանց
(հ. հ. կ.) 1113. 3—1

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1.
(երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(ա. օ.) (առ.) 1045. 100—14

ՄԻ ՓՈՐՁՎԱԾ ՀԱՇՒԱՊԱՀ
որ հմուտ է գործարանական, մանուֆակտուրային, հանքային, նաւթային, ադմինիստրական գործերի՝ որոնում է աւագ հաշուապահի պաշտօն: Հասցէն՝ Կարապետ Յով. Աւագեանի կոմմիսիոնի գրասենեակը:
(հ. ու. կ.) (առ.) 1114. 3—1

ԻՐԱԽԱՍՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

II

Անշուշտ՝ մեր ընթերցողները չեն մոռացել մի նկատողութիւն, որ մենք քաղուածօրէն վերցրել էինք Կ. Պոլսի «Հայրենիք» թերթից: Առաջ ենք բերում նորից նրա մի կտորը:

«Դեսպան մը, խօսելով յունաց պատրիարքարանի մասին, դիտել տուած է, թէ 400 տարիէ ի վեր կիրարկման մէջ գտնուող իրաւունքներ չեն կրնար ջնջուիլ ակնթարթի մը մէջ, ըլլան անոնք վաւերացեալ մագաղաթեայ ֆերմաններով, ըլլան միայն սովորութիւն և բարք:

«Ամեն պատրիարքարանի ետին կան միլիոններով ժողովուրդներ, որ դարերէ ի վեր վարժուած են տեսնել իրենց պատրիարքին մէջ հայր մը, պաշտպան մը, օգնական մը ընդդէմ եղած անիրաւութիւններուն ու զրկանաց:

«Ահա յոյնին և հայուն ընդհանուր մտայնութիւնը, որ իրականութիւն մըն է, որուն դէմ պիտի բաղխի նոր քաղաքականութիւնն ամենադժբաղդաբար:

«Մեր երիտասարդ Թիւրքերը կը ձգտին ստեղծել այսպէս բիւզանդական կռիւներու նոր շարք մը, որուն մէջ թէ իրենք և թէ մենք՝ քրիստոնեաներս՝ պիտի մաշուինք, մեր կամքին հակառակ խելք ու ժամանակ վայրապար վատնելու»:

Այդպէս է ասել դեսպանը, այդպէս է խորհում և Թիւրքահայ հասարակութիւնը:

Եւ հասկանալի է:

Թիւրքիայի քաղաքական իրականութիւնը, նրա առօրեայ պրակտիկան դեռ այնպիսի դրութիւն չէ ստեղծել, որ ինքը հայ հասարակութիւնն աւելորդ նկատէր իր ազգային ժողովը և իր պատրիարքարանը: Գուցէ կը լինի այդ ժամանակով: Երբ այդ կը լինի, այն ժամանակ ինքն ըստ ինքեան Թիւրքահայը այլ ևս չի դիմի իր ազգային ժողովին և նրան կը դատապարտի բնական մահի:

Բայց այժմ այդ դրութիւնը և տրամադրութիւնը չը կան: Եւ ոչ միայն այդպիսի տրամադրութիւն չը կայ, այլ դրա փոխարէն տիրում են Թիւրքահայերի մէջ հիասթափութիւն և վհատութիւն:

Եւ արդարև՝ մի՞թէ բաղդաւոր ազգը և Թիւրք կառավարութեան վստահացող ժողովուրդը կը շարունակէ գաղթել իր մայր երկրից և կը մտածէ մասսային հաւատափոխութեան մասին, ինչպէս այդ տեղի ունի Կիլիկիայի և Ադանայի շրջանների հայութեան մէջ: Թիւրքահայ, եւրօպական և նոյնիսկ Թիւրքական լրագիրները ամբողջ յօդուածներ նուիրեցին հայերի հաւատափոխութեան, և կամ այս ու այն պետութեան հովանաւորութիւնը հայցելու խնդրին: Իսկ Ամերիկայում, Եգիպտոսում, Անդրկովկասում գտնվող Թիւրքահայ պանդուխտներն այնպիսի սպասողական դիրք բռնեցին հայրենիք վերադառնալու գործում, որ հարկաւոր եղաւ յատուկ խրատներով յորդորել նրանց դէպի վերադարձ:

Եւ ի՞նչ: Երբ այդպիսի դրութեան ժամանակ պատրիարքարանը յայտնում է Թիւրք կառավարութեանը, որ հայ ժողովուրդը չէ կարողանում հանգիստ նուիրվել իր առօրեայ կեանքին, որ Ադանայի ջարդարարների անպատիժ մնալը երկիւղի և կասկածի զգացմունքներ է թողնում հայ ազգի մէջ, ի՞նչ պատասխան է լսվում Թիւրք կառավարչական շրջաններից: Մի անհեթեթ պատասխան:

— Պատրիարքարանը միայն կրօնական իրաւասութիւն ունի և չը պէտք է խառնվէ ուրիշ գործերի մէջ.—ահա պատասխան:

Այդ պատասխանը բնորոշ է:

Այդպիսի պատասխանը ոչ միայն չէ լուծում ոչ մի խնդիր, այլ աւելի ևս բորբոքում է այն կասկածը, որ կայ Թիւրքահայի մէջ դէպի օսմանեան կառավարչական շրջանները:

Այդ պատասխանը միայն իւղ է ածում կրակի վրա: Եւ Թիւրքահայը իրան զգում է աւելի ևս կապված իր ազգային ժողովի և պատրիարքարանի հետ:

Եթէ անցեալ տարի Թիւրքահայը, գտնվելով օսմանեան սահմանադրութեան արշալոյսի փայլուն խոստումների օրերում, դեռ կարող էր կարծել, թէ նրա ազգային ժողովը և պատրիարքարանը դառնում են աւելորդ, այժմ նա չունի և հետքը այդպիսի տրամադրութեան:

Ի՞նչպէս Թիւրքահայի մէջ հաստատվէն լիովին վստահութիւն և կատարեալ հաւատ դէպի մի կառավարութիւն, որը հեղինակութիւն չունի պատժել Ադանայի ջարդարարներին և արդարացի գանգատների ու պահանջների դիմաց ոչ թէ այդ գանգատներին գոհացում է տալիս, ոչ թէ հաստատ երաշխաւորութիւններ է ներկայացնում, այլ սպառնում է եղած իրաւունքներն էլ չը ճանաչել և գանգատի ու պահանջի աղբիւրը խսպառ ցամաքեցնել:

Թիւրքահայը այդ լաւ է հասկանում և այժմ աւելի քան երբևիցէ նա սղմվել է իր ազգային ժողովի և պատրիարքարանի շուրջ:

Եւ անկասկած՝ եթէ պատրիարքարանը մրցում է Թիւրք ազդեցիկ շրջանների հետ իր հեղինակութեամբ հայերի աչքում, այդտեղ պէտք է բացատրութիւն որոնել այն իրական հանգամանքների մէջ, որոնցով վարկաբեկվել են և վարկաբեկվում են Թիւրք կառավարչական շրջանները:

Եւ յամենայն դէպս՝ այդ շրջանները, ձգտելով ջնջել Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը և ձգտելով ոչնչացնել ազգային ժողովի ու պատրիարքարանի իրաւասութիւնները, ամենևին չեն բարձրացնի իրանց հեղինակութիւնը, այլ կը հասցնեն նրան տարատափելի հարուածներ.

Միայն անհեռատես Թիւրք քաղաքագէտները և տնաբոյս իմաստակները կարող են կարծել, թէ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը պէտք է լուծվի այժմ և պատրիարքարանը պէտք է դառնայ լոկ կրօնական իրաւասութեան մի ատեան:

Դեռ չէ հասել ժամը:

Եւ արդեօք վերանորոգվող Թիւրքիան ներկայացնելո՞ւ է շուտով այդպիսի մի ժամ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Աթէնք, 19 հոկտեմբերի

Ամբողջ մամուլը ամենավճռական կերպով պարսաւանք է յայտնում ապստամբների գործողութիւններին: Հաւատացնում են, որ ապստամբ օֆիցերները բնաւ մտադրութիւն չունէին գնալ Կրետէ, այլ ձգտում էին բացառապէս ներքին յեղաշրջման: Տիպալդոսը չորս ընկերակիցներով դեռ ևս թագնվում է:

Զանազան կորպորացիաների միութիւնը երեկվայ արտակարգ նիստում մի բանաձև ընդունեց, որով արհամարհանք է յայտնվում ծովային օֆիցերների ապստամբութեան առիթով, որոնք այնպէս ծանրագին կերպով խախտեցին հայրենիքի շահերը և ձեռնմխեցին ազգի պատուին: Բանաձևը ազգաբնակութեանը յորդոր է կարդում ուշիմ լինել և պահանջել՝ արագութեամբ ճնշել նման շարժումը և օրինակելի պատիժ տալ մեղաւորներին:

Մինիստրների խորհուրդը հաղորդեց դատախազին, որ ապստամբները պէտք է դատվեն երդուեալների դատարանով իբրև քաղաքական յանցաւորներ:

(Հ. Գ.)

—

Տօկիօ, 19 հոկտեմբերի

Մարկիզ Իտօյի մարմինը այսօր զինուորական նաւով բերվեց այստեղ. կայարանում սպասում էին հանգուցեալի ընտանիքի անդամները, բարձրաստիճան անձեր, որոնց թւում 5 պրինցներ: Բոլորի ուղեկցութեամբ մարմինը տարվեց հանգուցեալի բնակարանը: Ամբողջ ճանապարհին կանգնած էր ժողովրդի ահագին բազմութիւն: (Հ. Գ.)

—

Լօնդօն, 19 հոկտեմբերի

Րէյտէրին հաղորդում են Պեկինից. «Հրատարակվեց կայսերական հրովարտակ, որով որոշվում են այն դասակարգերը, որոնցից պէտք է ընտրվեն պետական ժողովի անդամները: Վերջինս լինելու է վերածումն պարլամենտի, որ բաղկացած է երկու պալատներից: Ժողովի կազմի մէջ մտնում են կայսերական տան անդամները, գեներալները, բարձրաստիճան անձեր, ուսումնականներ, կառավարական խորհուրդների անդամները, մօնղօլ և տիբեթցի պրինցները»: (Հ. Գ.)

—

Լօնդօն, 19 հոկտեմբերի

Րէյտէրին հաղորդում են Պեկինից. «Գաւառական խորհուրդները առաջարկում են ընդդիմադրել նոր հարկերի առման, առանձնապէս դրօշմատուրքի, նաև արտասահմանում փոխառութիւններ կնքելուն: Չինական մամուլը պաշտպանում է այդ շարժումը»: (Հ. Գ.)

—

Ռաշտ, 19 հոկտեմբերի

Հոկտեմբերի 17-ին Էնզելիում հան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՈԼՍՈՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Կ. Պոլիս, 25 հոկտ.

Դողրը-եօլէն քալած ատենս, կը զգամ, որ կը գտնուիմ կօսմօպոլիտ երկրի մը մէջ. ամեն մէկ քայլ առնելուս ծխավաճառի մը մի մետրանոց կրպակին առջև՝ շար ի շար կը տեսնեմ բազմալեզուեան օրաթերթեր. հայերը բնականաբար ազգային թերթերու աւելի նախամեծարանք մը ունին:

Շրջուն լրագրավաճառներ «Նէօլոգոս», «Դագիդրոմոս», «Սաբահ», «Իկդամ» «ըՍթանբուլ», «Լա Թիւրքի» օտար լրագրաց հետ՝ կը յիշեն հայկական օրագրաց անունները՝ «Հայրենիք», «Բիւզանդիոն» «Ժամանակ», «Առաւօտ», «Գաղափար», «Ազատամարտ», «Կաւռօշ», որոնց բովանդակութիւնը ուրիշ առթիւ խնդրոյ նիւթ կընեմ. ինչ որ կերևի, հայ լրագրի ընթերցանութիւնը այնքան յառաջդիմութիւն չէ ունեցած՝ որքան որ յուսալի էր. պիտի զարմանաք, եթէ ըսեմ, որ երգիծական թերթերն աւելի համակրելի ընդունելութիւն գտած են:

Ան հասարակ ամեն դասակարգի մէջ ընթերցումը մուտք ունի, թէև նուազ չափով. մեր օրաթերթերը աւելի հետաքրքրական ընելու ջանքը կը պակսի:

Առաւօտ մը տեսայ, որ սադրազամի մը տղուն պալատին դռնէն՝ տէրութեան պաշտօնեաներէն մին կը մտնէ «Ժամանակ» թերթը կարդալով. հարցուցի քովինիս, թէ ան Թիւրք չէ՞ր. պատասխանեց, թէ Թիւրքէն աւելի հայ Թիւրք մըն է. ասկից կարելի է եզրակացնել, որ եթէ Թիւրքացած հայերը կարևորութիւն կուտան հայկական թերթերուն, բուն հարազատ հայը որքան եռանդով պիտի կարդայ հայ թերթերը, եթէ անոնց մէջ մէկ քիչ հայ սիրտ ու հայ միտք դրուի:

Անհասարակ հայ հասարակութիւնը քիչ մը խռովադէմ կերևի. Ադանայի ջարդերուն երաշխէպը անջնջելի վառախտաբակ սուգ մը հաղորդեր է հայ հոգիներուն: Ամեն ծանօթ ինծի հետ խօսելուն, առաջին խօսքը Ադանան կըլլայ. երկրորդ՝ պատրիարքի հրաժարականը. այս երկու մեծ խնդիրները օրուան խօսակցութեան նիւթերն են. սակայն այսքան ջլատ ու վհատ կացութեան մէջ, տակաւին մեր եկեղեցականները, վարդապետ ու աւերտէր, իրենց սովորական վեհափառ ճօճ ճեմերով զարմանք կազդեն. արքայազն Զիաուդդին էֆէնդին՝ իր բարեհամբոյր գնացքով հազիւ կրցայ որոշել թէ սուլթանին որդին է: Եկեղեցականներու վեհափառութիւնը քալուածքին մէջն է…

*

Հոս գալէս ի վեր, առաջին անգամն է, որ նաւակով կղզիներուն կայցելեմ. ասոնք իրենց ներկայ կացութեան մէջ պատմական նշանակութիւն մը չունին. բիւզանդական կայսերաց շրջանն է, որ անոնց անցեալը մագնիսացուցած է. ու երբ մենք անոնց ուրուանկարը ծովին ու նաշխուն երկնքի ողջագուրուած հորիզոնին վրայ կը նշմարենք, դիւցազնական դարերու արհաւրալից պատմական էջերը վերյիշումներով կարթննան մեր մտքին մէջ: Մօդայի շոգենաւը մեծ կամուրջէն հեռացաւ. ցուրտ և առողջ քամիին դիմադրելով, մեր նաւը կը կտրէր խաղաղ ջուրը. որքան կը հեռանանք կամուրջէն՝ այնքան կը մեծնայ Կ. Պոլսոյ ընդհանուր համայնապատկերը. մեր առջև մահիկ մը կը գծուի Սիրքէջիէն մինչև Սկիւտարի եզրը: Հոյակապ տեսարան, խեղճ, փայտաշէն տնակներու ուրուանկարը՝ գեղունի այտերուն թշուառ քոսութիւնը կը յիշեցնէ. ակնապարար հրաշագեղ համայնապատկերին վրայ՝ հազիւ նշմարելի են մէկ քանի ուշանչելի շէնքեր: Հայդար-փաշային մօտեցած էինք, ահա զինուորական բժշկութեան հիւանդանոց նորակառոյց շէնքը վեհաշուք տպաւորութիւն մը կուենէնայ մեր վրայ: Թիւրքերու միամիտ սնափառութիւնը փայփայած կըլլանք, մինչ կը մտանենք շէնք այդ և կամ նման մէկ շէնքի վեհութիւնը:

Մեր շոգենաւը հասաւ Մօդայի նաւամատոյցը, ուր արդէն Պոլիս մեկնողներու բազմութիւնը կը սպասէ. արտօրալով տեղ բռնելու և դուրս ելլալու տեսարանը՝ անկարգ խառնակութեամբ բնորոշ գիծ մը ունի տեղական բարքերու նկարագրութեան մէջ: Աչք գոցելու է ինչ որ պատահի… Կը համոզուիմ, որ իրօք անկիրթ Պոլսոյ մէջ կը գտնուիմ:

Ինը տարի վերջը՝ բաւական նորոգուած գտայ Քաղկեդոնի կառուղուց ճամբաները. մեր կառքը անցաւ ս. Թագւոր եկեղեցիին առջևէն. կոկիկ, սիրուն եկեղեցի մըն է. ժողովուրդը կիրակի օրուան կրօնական պարտականութիւնը կատարելու համար կը դիմէր հոն:

Ինծի ըսին, թէ Դուրեան սրբազան պատրիարքը Քաղկեդոն է առանձնացած. չուզեցի խանգարել իր խանգարեալ սրտաճմլիկ կացութիւնը: Իր հրաժարականին յամառութեան համամիտ էի. զի՜ս համոզած են, որ հոս հայ հոգևորականութիւնը պատրաստ է ռուսական եկեղեցիին ծոցը մտնել, եթէ հայուն վրայէն խսպառ չվերանայ Թիւրքական բիրտ հալածանքը: Կացութիւնը կնճռոտ էր. պատրիարքին հետ տեսութիւնս ուրիշ առթիւ:

Քաղկեդոն բոլորովին մերկ գտայ պատմական դարերու պերճանքէն: Նոր եւրոպացած գիւղի մը տպաւորութիւնը ունի, զրկուած Պերայի եռուզեռ պերճաշուք կեանքէն. անապատականներու յարմար միջավայր մըն է. կերևի ատոր համար է, որ եւրոպացի կրօնաւորներ այստեղ ունին մէկ քանի վարժարաններ. Մխիթարեաններն կէս դարէ ի վեր, հիանալի բարձունքի մը վրայ, կառուցեր են իրենց գիշերօթիկ վարժարանը. դիրքը հովասուն, առողջարար: Մխիթարեան Վենետիկի հայրերը իրենց այս և Պերայի վարժարանաց մէջ ամենէն աւելի կենդանի լեզուներուն մեծ կարևորութիւն կուտան. տեղացիներուն պահանջն է այդ:

Քաղկեդոնի մէջ երկար մնալու տաղտուկէն ազատելու համար, խկոյն Մօդայի ծովափէն առագաստաւոր նաւակ մը մտանք: Ծովը նոյն հին ծովն էր. դարեր առաջ այդ ծովը տեսած էր Մօրիկ կայսեր գահընկէց տարագրումը: Դէպի Ֆէնէր-Բահչէ կերթանք. նոյն ճամբան բռնած էր առմեկին գայրոյթի զոհ՝ Մօրիկ կայսրը. այդ ծովակին ափերուն վրայ՝ Մօրիկ կը գլխատուի. և իրմէ առաջ իր աչաց առջև իր որդիքը կը գլխատուէին:

Այս տխուր յիշատակները կը ջնջուէին՝ երբ ոտք դրի Ֆէնէր-Բահչէի դարաստանի կանանչին վրայ:

Քաղկեդոնցի հասարակութեան գերամեծար զբօսավայրը Ֆէնէր-Բահչէն է: Կիրակի կէսօրէն վերջը՝ ժողովուրդը կառքերով հոս կը դիմէ: Օրը զուարթ էր. մենք ցամաքէն անցանք դէպի երկաթուղիի կայարանը. ճանապարհին տեսանք հայասէր Ֆուադ փաշայի կալուածները, լայնատարած երկիր, որուն մէկ անկիւնը տակաւին կը տեսնուի սիրուն քէօշկը (հովանոց), որ կիսակատար մնացած է. ուրիշ մէկ անկիւնը կը տեսնուի ամարանոցին տունը, առջևը արձաններով զարդարուած աւազանը: Այդ տեղէն տասը վայրկեան հեռու կը գտնուի երկաթուղւոյ կայարանը. Հայդար-փաշա տանող կառախումբը, ըստ միջազգային անկարգ, անճիշդ սովորութեան, Պէնդիքէն հասաւ երեք քառորդ վերջը. հոն մտանք. պաշտօնեաներն երիտասարդ-Թիւրքեր են. գերմանական այս գծին վրայի կօնդուկտորներու կրթութիւնը մոռցուց կոնվանսիօնել շոգեկառքի յոյն և Թիւրք պաշտօնեաներուն անկիրթ կոպտութիւնները:

Մինչև Հայդար-փաշա՝ գեղեցիկ է տեսարանը. հիանալի են բնական գիւղանկարները. անցեալ դարերը այս ճամբան պատմական դէպքերով անմահացուցած են. ես չտեսայ ոչ մի յուշարձան: Ե.

դիսաւորութեամբ բացվեց տարրական դպրոց ռուսական առեւտրա-արդիւնաբերական հաստատութիւնների միջոցներով։ (Հ. Գ.)

—

Նովօչերկասկ, 19 հոկտեմբերի

Շրջանային վարչութիւնը 250,000 ր. յատկացրեց զօրքի միջոցներից՝ պոլիտեխնիկումի համար։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Սօս գիւղ (Վարանդա), 11 հոկտ.

Արդէն 20-րդ օրն է, ինչ գիշեր-ցերեկ անընդհատ և սարսափելի անձրեւներ են տեղում։ Երկինքը շարունակ ամպած է, կարծես բնութիւնը սօսեցիներին ընդմիշտ զրկել է արեւից։

Գիւղի անյարմար դիրքը, մինչև մարդու ծնկներ հասնող ցեխը, անձրեւները և ցուրտը միախառնվելով ներկայացնում են մի անախորժ տեսարան։ Արշինաչափ ցեխի պատճառով գիւղի գլխաւոր փողոցի երթեւեկութիւնը դադարած է և միանգամայն տներից դուրս գալ չէ լինում։ Թէև այժմ ամեն տեղ աշնանացանի ամենաեռանդուն ժամանակն է (նոյնիսկ շատ տեղերում էլ արդէն վերջը), սակայն սրտի ցաւօք պէտք է ասել, որ սօսեցին անհոգ կերպով, ձեռքերը ծալած նստել է տանը և իր ապրուստի հոգատարութիւնը, ակամայից ստիպված, յանձնել բնութեան քմահաճոյքին ու թերի թողել իր վարը։

Ահա այդ անձրեւներն էին պատճառը, որ տեղի ունեցաւ հետեւեալ ցաւալի դէպքը։ Ուղիղ ժամը 8-ին երեկոյեան լսվեց մի խուլ դղրդոց։ Բանից երեւաց, որ փլվել է Մարտիրոս Ստեփանեանի գոմը՝ թողնելով գիւղացու միակ ընկեր և աշխատաւոր, թւով 9-ը կենդանիների անշնչացած դիակները քարերի և հողակոյտերի տակ։ Միայն ազատվեց ինքը՝ Ստեփանեան՝ շնորհիւ շուտափոյթ օգնութեան հասնող հարեւանների, որոնք ամեն ճիգ ու ջանք թափելով հազիւ կարողացան կիսամեռին մի կերպ ազատել փլատակների տակից։

Խեղճ մարդը ջարդ ու փշուր է եղել ամբողջ մարմնով։ Կեանքը վտանգված է, մահն անխուսափելի։ Սա երրորդ դէպքն է, որ պատահում է այստեղ։ Վնասը հասնում է առնուազն 450 րուբլու։

Ստեփանեանի գոյութեան աղբիւրը իսպառ ցամաքելով խեղճ ու կրակ ընտանիքն էլ մատնվեց վերջին ծայր չքաւորութեան անգութ ճիրաններին։

Մեզ մնում է հրաւիրել համագիւղացի բարերարների խորին ուշադրութիւնը։

Անցորդ

—

Նիժ, 14 հոկտեմբերի

Ուտիախօս Նիժ գիւղի մասին շատ անգամ է գրվել թերթերում, շատ անգամ է նկարագրվել նրա անցեալ և ներկայ անմխիթար վիճակը։ Երկար տարիների ընթացքում գիւղը առաջադիմութեան ոչ մի նշոյլ չէ ցոյց տուել։ Տասը տարի առաջ գիւղը նոյնն էր, թերեւս աւելի բարւոք վիճակի մէջ, քան ներկայում։ Կրթական գործը, որ առաջին տեղը պէտք է բռնէր գիւղում, միանգամայն անուշադրութեան է մատնված։ Գիւղացիները խուսափում են դպրոցից և աւելորդ մի հիմնարկութիւն համարում, պատճառ բերելով որ դպրոցը աչքի ընկնող ոչինչ չէ տուել և ուսուցիչները ժողովրդի մէջ ատելութեան սերմեր են ցանել և գիւղացիներին լարել իրար դէմ։ Աւագ ուսուցիչների անունները լսելիս սարսափում են. հետաքրքրվում, հարցնում եմ պատճառը և ստանում եմ շատ անգոհացուցիչ պատասխան անցեալ ուսուցիչների և մանաւանդ աւագ ուսուցիչների մասին։ Եւ յիրաւի համոզվում եմ գիւղացիների ասածների մէջ՝ ի նկատի ունենալով դպրոցի ներկայ ընկած վիճակը։ Աշակերտները, ընդհանուր առմամբ, զուրկ են գիտութեան պաշարից։ Հինգերորդ դասատան աշակերտները (դպրոցը երկդասեան է) կանոնաւոր հայերէն կարդալ և խօսել չը գիտեն, ուր մնաց միւս գիտութիւնները, որոնց մասին խօսելն անգամ աւելորդ է։

Ո՞ւմ պէտք է վերագրել այս բոլոր պակասութիւնները, եթէ ոչ դպրոցում պաշտօնավարած ուսուցիչների անբարեխղճութեան և հոգաբարձութեան թուլութեան և անուշադրութեան։ Եւ միթէ գիւղացիներն իրաւունք չունէին այսքան պակաս կողմերը տեսնելուց յետոյ խուսափելու ուսուցիչներից և դպրոցը անուշադրութեան մատնելու։

Ներկայ տարվայ ուսուցչական խմբի վրա բարոյական մեծ պարտք է ընկնում և մեծ ջանք ու եռանդ պահանջվում, հարթելու դպրոցի պակաս կողմերը։

Չը մոռանամ յիշել, որ, հին հոգաբարձութեան հրաժարվելու պատճառով, ամսիս 9-ին նոր հոգաբարձութիւն ընտրվեց։

Նորեկացի

—

Ալէքսանդրոպօլ, 16 հոկտ.

Ամսի 8-ի երեկոյեան ժամը 7-ին տեղիս առաջին մասի պրիստաւ Տէր-Սահակեանը, իր հետ ունենալով III գաւառամասի պրիստաւ Անդրէեվին, պոլիցիայի պաշտօնեայ Բաբիչին և մի քանի ուրիշ ծառայողների, ման էր գալիս քաղաքը։ Խուզարկում էին խանութներ և անցնող-դարձողներին։ Նրանց մէջ կային հարբածներ։ Ծեծված պատւաւոր քաղաքացիները բողոքեցին նահանգապետին, և նրա օգնականն այսօր եկաւ տեղս։ Այդ առիթով քննութիւն է կատարվում։

Քաղաքացի

—

Թէոդոսիա, 6 հոկտ.

Սեպտ. 20-ին դպրոցի դահլիճում տեղի էր ունենալու ժողով դպրոցի համար նոր հոգաբարձութիւն ընտրելու։ Տեղիս քահանան ժողովի հրաւիրել էր միայն բուն ղրիմցի հայերին ու այն թիւրքահայերին, որոնք տեղումս ունեն ընտանիք և խանութ։ Ժողովի սկզբում ներկայ եղողներից մի քանիսը բացատրութիւն պահանջեցին, թէ ինչու չեն հրաւիրել կայանալիք ժողովին նաև թիւրքահայերին, որոնք մինչև օրս ծխականների շարքումն են հաշւվել։ Քահանան պատասխանեց, թէ ծխական են համարվում նախ՝ բոլոր բուն ղրիմցի հայերը (օրինակի համար թէեւ մի քանի անուններ հարուստ ու դիրք ունեցող աղաների, որոնք բնաւ ղրիմցի չեն) և ապա այն պատւաւոր ընտանիքաւոր թիւրքահայերը, որոնք երկար ժամանակ բնակվում են Թէոդոսիայում ու պարապում են վաճառականութեամբ. Մնացած թիւրքահայերին (մօտ 90 մշակ-բանւոր) որոշել է հաշւել միայն իբրև ժամաւոր, որովհետև նրանք իրաւունք չունեն ժողովներին մասնակցելու։

Մի արհեստաւոր ծխական, որ իր շրջանում բաւականին դիրք ունի, նստած տեղից խնդրում է քահանային մատնացոյց անել, թէ ինչ կանոնների հիման վրա նա զրկում է թիւրքահայերին իրանց ծխ. իրաւունքներից։ Տէր-հայրը այդ հարցին պատասխանեց. «Կօշկակար այս-ինչ, վեր կաց և այնպէս խօսիր»։ Կօշկակարին ձայնակցեցին գրեթէ բոլոր ժողովականները, բայց քահանան խուսափում էր մատնացոյց անել որեւէ կանոն՝ առ ոչինչ համարելով ներկայ եղողների առարկութիւնը։ Տէր-հօր վարմունքից վրդովված՝ ժողովականները հեռացան դահլիճից և որոշեցին բողոքել ուր հարկն է ու բացատրութիւն խնդրել թիւրքահայ ծխականների իրաւունքների նկատմամբ։ Միւս օրը 92 ստորագրութեամբ մի հեռագիր ուղարկվեց Վեհ. Կաթողիկոսին։ Էջմիածնից պատասխան ստացվեց, թէ համաձայն ժամանակաւոր կանոնների՝ իւրաքանչիւր հայ, որ 25 տարեկան է և աւելի բարձր, ունի ծխականի իրաւունք, եթէ նոյն տեղը բնակվել է երկու տարուց ոչ-պակաս։ Քահանան չը բաւականացաւ սրանով, այլ իր կողմից դիմեց Քիշնեվի կօնսիստօրիային, յուսալով պաշտպանութիւն գտնել։ Բայց կօնսիստօրիան հրահանգում է վարվել հանգուցեալ կաթողիկոսի կոնդակով, որի համաձայն՝ ամեն մի հայ մի տեղում 6 ամիս ապրելուց յետոյ համարվում է ծխական։ Սակայն քահանան այդ երկու բացատրութիւնները ծոցը դրած լռութիւն էր պահում, մինչև որ ծխականների գրաւոր պահանջից ստիպված՝ պարտաւորվեց ժողով նշանակել։

Հոկտ. 4-ին դպրոցի դահլիճում կայացաւ ծխ. երկրորդ ժողովը, որին ներկայ էին բաւականաչափ թիւրքահայեր։ Այս անգամ տէր-հայրը ժողովի տրամադրութեան ներքոյ դրեց թէ կաթողիկոսից և թէ կօնսիստօրիայից ստացված բացատրութիւնները։ Ժողովականները միաձայն ընդունեցին Վեհափառի տուած հրահանգը։

Ձայների մեծամասնութեամբ հոգաբարձու ընտրվեցին երիտասարդ և ինտելիգենտ ոյժեր։

Ծխական

—

Երևան, 18 հոկտեմբերի

Այսօր Երևանից բաւականին մարդիկ գնացին Էջմիածին եպիսկոպոսական ձեռնադրութեանը ներկայ լինելու։ Բանից դուրս եկաւ, որ ինչ-ինչ պատճառներով հետաձգվել էր ամսիս 25-ին։ Ձեռնադրվողները հետեւեալ վարդապետներն են. Ներսէս Խարախանեան, Մեսրոպ Տէր-Մովսէսեան և Կարապետ ու Մխիթար։

Ինչպէս իմացանք, Վեհափառը ուզում է Երևանի փոխ թեմակալի համար ուղարկել Մուրադբէգեանին, որը ընտրվել էր անցեալում ամբողջ թեմից։ Այս առիթով դիմելու է Կովկասի Փոխարքային։

Գ. Աղազադեան

ԴՈՒՄԲԱՁԷ-ԲԵԿՄԱՆԻ ՄԻՋՆԱԴԷՊԸ

—

Իր ժամանակ «իսկական ռուս մարդու», գեներալ Դումբաձէի, մի արարքի մասին տեղեկութիւն չը տուինք «Մշակի» ընթերցողներին, կարեւորութիւն չը տալով յարգելի գեներալի գրչի արտադրութեանը, քանի որ մի անգամ ինքը Դումբաձէն խոստովանել էր մամուլի միջոցով, որ նա գրելու, շարադրելու մէջ այնքան վարժ չէ, ինչպէս սուր ճօճելու մէջ։

Բայց այժմ արդէն գեն. Դումբաձէի վարմունքը այսօր-վաղը դառնալու է Պետական Դումայի հարցապնդման նիւթ, ուստի մենք ստիպված ենք վերադառնալ եղելութեանը։ Իբրև ճշմարիտ «իսկական ռուս մարդ» և Եալտայի «սօիւզնիկների» պատւաւոր նախագահ, գեն. Դումբաձէն խիստ վրդովված էր ֆինլանդական դատարանի վարմունքի, Հերցենշտէյնի գործի քննութեան, Դուբրովինի կանչվելու, պաշտպան Բուլացելին հեռացնելու և դատավարութեան ժամանակ նրա սարքած սկանդալի դէմ։ Չը համբերեց գեն. Դումբաձէի ազգասիրական սիրտը և նա հետեւեալ հեռագիրը ուղարկեց ֆինլանդական գեն.-նահանգապետ Բեկմանին։ «Մեր ջերմ սիրած Թագաւոր Կայսրի և Նրա Օգոստափառ Ընտանիքի մեզ մօտ, Ղրիմի հարաւային ափում, գտնվելու առիթով մեր վայելած աննկարագրելի տօնական տրամադրութիւնը և ցնծութիւնը ներկայումս մթագնվել է այն անլսելի յանդգնութեամբ, որ կատարեց ֆինլանդական դատարանը ռուս մարդու՝ երդ.-հաւատարմատար Բուլացելի վերաբերմամբ։ Ես պարտքս եմ համարում ձեզ տեղեկացնել, որ Եալտայում հաւաքված մեծ բազմութիւնը իրան ճնշված է զգում այդ լիրբ վարմունքից, և բոլորը ապշած են, թէ ինչպէս դուք, որ ձեր գործունէութեամբ Կուրլանդիայում կարողացաք վաստակել ընդհանուրի յարգանքը, այժմ Ֆինլանդիայում այդպէս սառնասրտօրէն դիտում էք մի շարք ծաղրանքներ դէպի ռուս մարդիկ»։

Պէտք նկատել, որ Դումբաձէն գեներալ-մայոր է, իսկ Բեկմանը գեն.-լէյտենանտ, ուրեմն ըստ զինուորական կարգապահութեան ամենայն յարգանքով պիտի վերաբերվէր իր մեծաւորին։ Այս դէպքը ստացաւ սուր բնաւորութիւն։ Գեն. Բեկմանը, ուղարկելով Պ. Ա. Ստոլիպինին Դումբաձէի հեռագիրը, յայտնեց, որ, ծառայութեան մէջ գտնվելով, նա հաշտվել է այն մտքի հետ, որ իր վրա պիտի յարձակվեն հասարակական զանազան խաւերի մարդիկ. դա թէև անախորժ է, բայց անխուսափելի՝ ամեն մի պաշտօն կրողի համար։ Բայց կրել սուր յարձակումներ այն անձերի կողմից, որոնք ստորադրեալ են նոյն իշխանութեան, ինչպէս և ինքը Բեկմանը, նա համարում է անկարելի բան և այդ պատճառով կուզենար իմանալ, թէ արդեօք կենտրոնական իշխանութիւնը նոյն կարծիքին է, ինչ որ նրան հպատակվող Դումբաձէն։ Եթէ բարձր իշխանութիւնը նոյն կարծիքը չունի, մտադիր է նա ապահովել իրան Բեկմանին ապագայում նման յարձակումներից, որոնք ըստ էութեան վիրաւորական են, կոտրում են իշխանութեան պատիւը առհասարակ և բնաւ հանդուրժելի չեն։

Հաղորդելով այս դրութիւնը, «Рус. Вѣд.» գրում էր, որ մինիստրների մեծամասնութիւնը վրդովված է գեն. Դումբաձէի արարքի դէմ և կարծում է թէ ժամանակ է վերջ տալ նրա «սանձարձակութիւններին»։ Դահլիճի անդամները մտածում են, թէ առհասարակ ժամանակ է պաշտպանել կառավարութեան ներկայացուցիչներին իր հպատակ պաշտօնեաների յարձակումներից։ Մասնաւորապէս Դումբաձէին գալով յիշում են նրա սուր յարձակումը ամբողջ մինիստրութեան վրա և առանձնապէս ֆինանսների մինիստր Կոկովցեվի հետ ընդհարումը տարի ու կէս սրանից առաջ, երբ Դումբաձէն դեռ գնդապետ էր։

Եղան սակայն և Դումբաձէի պաշտպաններ։ Սև-հարիւրեակային «Рус. Знамя» թերթը, «Рѣчь»-ի ասելով, տպագրել է Պետերբուրգի ռուս ժողովարանի խորհրդի հետեւեալ հեռագիրը. «Եալտա, գեն.-մայոր Դումբաձէին.—Միապետականների տօնի օրը՝ ռուս ժողովարանը ուղարկում է ձեզ, ձերդ գերազանցութիւն, անդադրում և անվախ մարտիկիդ կրամոլայի դէմ, իր սրտագին ողջոյնը, ցանկանալով որ դուք հնարաւորութիւն ստանաք խաղաղեցնել չարաբաղդ հայրենիքը։ Նախագահ՝ կոմս Հէյդէն»։

Ահա և գեն. Դումբաձէի պատասխանը.

«Սրտի խորքերից զգացված եմ ընտանի միախոհների անգին ուշադրութեան համար։ Սրտանց շնորհակալ եմ ձեզնից բոլորից և հաւատացնում եմ, որ պարծանք է ինձ համար ձեզ հետ միասին աշխատել մինչև իմ օրերիս վախճանը»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Վաղը, հինգշաբթի, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան շինութեան մէջ, տեղի կունենայ կովկասագիտական բարձր դասընթացքների դասախօսների խորհրդակցութիւնը դասընթացքների յետագայ գործունէութեան հարցի առիթով։ Խորհրդակցութեանը կարող են ներկայ գտնվել նաև կողմնակի անձինք, որոնք հետաքրքրվում են դասընթացքների վիճակով։

◆ Այս օրերս Թիֆլիսի վրայով Կ. Պոլիս մեկնեցին պրոֆ. Մալրիգիս և բժիշկներ Ջաֆար-Փաշի և Բասոր-էֆենդի, որոնք թիւրքաց կառավարութիւնից ուղարկվել են Անդրկովկաս՝ ուսումնասիրելու եղջերաւոր անասունների ժանտախտի դէմ սահմանված մաքառման միջոցների հետ։

◆ Մինչև օրս նորակոչ զինուորացուներ ընդունվել են 106. հոգի։ Իսկ ընդհանուր թիւ, ինչպէս յայտնի է, լինելու է 215։

◆ Թռչնապահութեան ցուցահանդէսին առաջին օրը այցելեցին մօտ 1000 մարդ, հետեւեալ օրը մօտ 800 հոգի։

◆ Նոյեմբերի 20-ին Թիֆլիսում բացվելու է մեղուաբուծութեան ցուցահանդէս։ Այս ցուցահանդէսը իր տեսակի մէջ առաջինն է լինելու, որի նախաձեռնողներ հանդիսանում են ինքնուրոյն մեղուաբոյծներ։ Բացի տեղական նիւթից, ցուցահանդէսին կը լինեն նաև նիւթեր Հիւսիսային Կովկասից և Ռուսաստանի հարաւից։

◆ Երկուշաբթի Թիֆլիսի քաղաքային դումայի հերթական նիստը բացեց քաղաքագլխի պաշտօնակատար Ալ. Խատիսեանը, որը դիմեց ձայնաւորներին մի զգացված ճառով, որի մէջ յայտնելով ձայնաւոր Եղիշէ Թափչեանի վաղաժամ մահվան մասին, գրուատեց նրան իբրև եռանդուն հասարակական գործչի և աշխատաւոր դասի շահերի պաշտպանի։ Վերջում նրա առաջարկութեան համաձայն դուման հանգուցեալի յիշատակը յարգեց յոտնկայս։ Հանգուցեալի մասին ցաւակցական հեռագիր ստացանք 40 ստորագրութեամբ նաև Ալէքսանդրոպոլից։

◆ «Зак.»-ի ասելով՝ Պետերբուրգից հաղորդում են, որ երկու միջնակարգ գիւղատնտեսական դպրոցներ Անդրկովկասում բանալու նախագիծը երկրագործութեան և հողային բարեկարգութեան մինիստրութեան մէջ վճռված է դրական մտքով. անհրաժեշտ գումարները մտցվելու են 1911 թւի նախահաշւի մէջ։

◆ «Голосъ Москвы»-ի ասելով, շուտով հրաժարական է տալու Երևանի նահանգապետ բարօն Տիզէնհաուզէնը։ Նրա տեղ նշանակվելու է Դաղստանի զինուորական նահանգապետ Պրիվէնկօն, իսկ վերջինիս պաշտօնը տրվելու է Փոխարքայի դիւանատան ծառայողներից մինին։

◆ Ստացանք «Գուտտենբերգ» գրախանութի հայերէն գրքերի նոր ցուցակը 1909 թ.։ Ստացանք նաև Աբիսողոմ Յովհաննիսեանի «Փոթորկից առաջ» վէպը, հրատ. Գ. Գալստեանի, գ. 1 ր.։

◆ Պաշտօնապէս յայտարարված է հետեւեալը. «Ի նկատի ունենալով, որ Թիֆլիսի էլեքտրաքարշի ծառայողները յամառութեամբ հրաժարվում են հնազանդվել նրանց համար նորերս հրատարակված կանոններին, կիրակի օրը, հոկտ. 18-ին, Թիֆլիսի ոստիկանապետի պաշտօնակատար գնդապետ Զասիպկինը Թիֆլիսի էլեքտրաքարշի պարկում, համաձայն Նահանգապետ Լօղինա-Լօղինսկու ցեկուցման, յայտնեց էլեքտրաքարշի երթեւեկութեան ծառայողներին, որ հին կանոնները ներկայումս համարվում են վերացված և նրանց փոխարէն սահմանված են նորերը, որոնք հաստատվել են էլեքտրաքարշի վերատեսչից և հաւանութիւն գտել տեղական բարձր իշխանութիւնից, և որ նրանք, որոնք չեն ցանկանայ հնազանդվել այդ նոր կանոններին, պէտք է պաշտօնից հեռանան, իսկ յետոյ արդէն կարող են իրանց իրաւունքները պաշտպանել դատարանում էլեքտրաքարշի ադմինիստրացիայի առաջ»։

◆ Ստացանք Ալ. Աբէլեանի «Էքսպրօպրիացիա», կատակ մի գործ. և 3 պատկերով. գինն է 20 կոպէկ։

◆ Թիֆլիսում այս օրերս կրկին երեւան հանվեց մեծ քանակութեամբ կեղծված իւղ։

◆ Մօտիկ ապագայում բացվելիք Արամեանի անուան երեխաների հիւանդանոցի պաշտօնները դասաւորված են այսպէս.— գլխաւոր բժիշկ Բօնչ-Ասմօլօվսկի, գլխաւոր բուժարար (терапевтъ) Յարութիւնեան, պրօզեկտոր՝ Ա. Մուխարինսկի, իսկ գլխաւոր վիրաբոյժի հարցը թողնված է առկախ։

◆ «Դրօէբան» հաղորդում է, որ Քութայիսի գիւղատնտեսական ցուցահանդէսում ցուցադրված ապրանքների տէրերից մէկը, Ստ. Փէյքարօվը, որը 2 տարի սրանից առաջ Քութայիսում ունեցած իր երկաթավաճառանոցի մեծ խանութը գրելով ուրիշի անունով վերջ տուեց իր պարտքերը վճարելուն և պարտքատէրերին թողեց դատարկաձեռն, այս տարի, գովասանական թերթ ստանալու մտքով, ցուցահանդէսում ցուցադրեց իր վաճառանոցից մնացած բոլոր արժէքաւոր իրերը, գրաւեց առաջին տեղ և առարկաների վրա գեղեցիկ, խոշոր տառերով գրեց ազգանունը՝ «Ստեփան Փէյքարօվ»։ Մի գեղեցիկ օր Փէյքարօվի առաջ կանգնում է մի մարդ, ոստիկանի հետ, ձեռքին բռնած փոխանակ գովասանականի՝ կատարողական թերթը և, իր պարտքում վեր գրելով մի քանի հազար րուբլու ապրանք, ցուցահանդէս սարքողների կեանքը օրհնելով հեռանում է այնտեղից։

◆ Ախալքալաքից գրում են մեզ, որ հոկտ. 11-ին, կիրակի օրը, տեղական հայոց ծխ. դպրոցի դահլիճում նոյն դպրոցի ուսուցիչ Յովհաննիսեանը երաժշտութիւնից կարդացել է մի դասախօսութիւն։ Դասախօսութիւնը լաւ տպաւորութիւն թողեց լսողների վրա։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիֆլիսի ոստիկանապետն առաջարկել է ոստիկանութեան անդամներին որոնել անյայտացած Տիգրան Սանուեանցին, որ ապրում է Գրիբոեդովսկայա փող., Մայգէլսոնի տանը։

◆ Յանցաւորներին եռանդով ձերբակալելու համար Թիֆլիսի ոստիկանապետը շնորհակալութիւն է յայտնում խուզարկու բաժանմունքի պետ Գադիեվին, 2-րդ քաղաքամասի թաղ. վեր. Դանէլիային, 8-րդ քաղ. քաղաքապահ Իօսիֆ Լինչէնկոյին։ Նկատողութիւն է անում հասցէների սեղանի բաժանմունքում ծառայող օր. Անտօնիա Գավլինայի անփոյթ վերաբերմունքի համար։

◆ Թիֆլիսի ոստիկանապետն առաջարկել է պրիստաւներին խստիւ հետեւել, որպէսզի տնատէրերը շատ լուրջ ուշադրութիւն դարձնեն կեցողների տնային ցուցակներում ճիշդ կերպով ցուցակագրելու վրա։

◆ Հոկտ. 19-ին, գիշերվայ ժամը 12-ին Թիֆլիսեցի Նիկ. Կալմիկօվը Բօդօվայա հրապարակի վրա դանակով հինգ վէրք հասցրեց Վասիլի Շաւաշվիլուն, որից յետոյ անյայտացաւ, բայց հետեւեալ օրը ձերբակալվեց։

◆ Հոկտ. 19-ի գիշերը Տիգրան Յարութիւնեանը, Պեսկօվսկայա փողոցում № 7 տանը, Մարիամ Յարութիւնեանից գողացել է 200 րուբլու տնային իրեր և շորեղէն։ Տիգրան Յարութիւնեանը ոստիկանական պաշտօնեաների ձեռքով ձերբակալված է։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Հայ դերասանական ընկերակցութեան երկրորդ ներկայացումը գրաւել էր աւելի բազմութիւն, քան առաջինը։ Թատրոնի աւելի քան կէսը լցված էր հանդիսականներով։

Խաղացվում էր Դոստոեվսկու «Ապուշ» հեղինակութեան թատերական փոխադրութիւնը, թարգմանութիւն Գ. Խաժակի։

Մենք չենք պատմի պիէսի բովանդակութիւնը։ Նա արդէն յայտնի կը լինի ընթերցողին։

Գլխաւոր հերոսուհի Նաստասիայի դերում հանդէս եկաւ տիկին Մայսուրեան, որը ուսումնասիրել է տիպը բարեխղճօրէն և արտայայտում է նրա հոգեկան յուզմունքները հարազատ կերպով։ Մայսուրեան տալիս է Նաստասիայի տիպին մի տեսակ բարոյական ծանրաչափի նշանակութիւն, որով նա փորձաքար է հանդիսանում իր շրջապատողների համար։ Եթէ Մայսուրեան փոքր ինչ բեղօնեօրութիւն տուած չը լինէր իր տիպին՝ նրա դերը կը լինէր բոլորովին կատարեալ և բնական։

Գլխաւոր հերոս իշխան Մըշկինի դերը կատարում էր Ալիխանեան, որին աջողվեց ամբողջացնել հոգեբանական այն զանգուածը, որ հեղինակը դրել է «Ապուշի» կազմութեան մէջ։ Ալիխանեան գործեց դերին համապատասխան տպաւորութիւնը և նրա խաղը կը լինէր լիովին կատարեալ, եթէ նա մտցնէր «Ապուշի» դերի մէջ աւելի մտերմութիւն և մեղմացնէր այն սառնութիւնը, որ ներկայումս երեւում է տիպի արտայայտութեան մէջ։

Նախաթունի երիտասարդ Իվօլգինի դերում աջող էր առանձին կտորներում, բայց չէր ամբողջացրել տիպը։ Մամիկոնեան Ֆերդիշչենկոյի դերում տիպիքական էր։ Ալեքսանդրեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Մզոյեան, տիկիններ՝ Գուլազեան, Զաբէլ, Մելիքեան, Յասմիկ և միւսները պահպանեցին անսամբլը։

Ներկայացումը թողեց գոհացուցիչ տպաւորութիւն։ Միջարարները երկար չէին։ Ռեժիսօրական մասը բաւարար է։ Մի երկու տեղ ուշացումներ եղան դերասանների խօսքերում, բայց անցան համարեա աննկատելի։

Յաջորդ երկուշաբթի, հոկտեմբերի 26-ին, կը ներկայացվեն Իբսէնի «Ուրուականներ» դրաման, երեք գործողութեամբ, և Չեխովի «Յօբելեան» վօդեվիլը, մէկ գործողութեամբ։

Սիրող

ՀԱՅ ՄՏՔԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՍԽՕԼԱՍՏԻԿԱՆ

—

Մենք իդէալիստ ենք եղել։

Պղինձը ոսկի ենք կարծել, ժեստը՝ արծաթ և ամեն ինչ, որ մերն է եղել, ուզեցել ենք տեսնել ոսկեզօծած, որ պսպղուն լինի, պարարի մեր աչքը, որ գոնէ իլլիւզիայով մօտեցած լինենք իրականութեան։

Բայց իրականութիւնը փախչում էր մեզանից, հայ միտքը սուզվել էր վերացական աննիւթ սքանչելի պարուրանքների մէջ, հայ գիտութիւնը՝ սնապարծութեան և ազգային ինքնագովութեան մէջ։

Հինգերորդ դարը ոսկու դար է,—ասում էինք մենք,—Եղիշէն՝ ոսկեբերան,—և աւելի հեռուն և աւելի առաջ գնալ չէինք կամենում։

Չէինք կամենում և փոշոտված Խորենացուն ձեռք տալ. դա մեր ազգային փինատն էր, երկրպագել էինք ուզում։

Բայց եկաւ եւրոպական միտքը, գիտութիւնը փչեց մահաշունչ շնչով, ցրեց դարերով կուտված փոշին և իբրև վիրահատ անդամահատեց մեր փինատին։

Մենք արտասուեցինք, բայց չը խրատվեցինք։

Հետեւեցինք եւրոպացուն, բայց խնայեցինք մառախլապատ փոշին Խորենացու անուան շուրջը և, իբրև նշխարներ, ժողովեցինք և նորից շպարեցինք բորբոսնած Խորենացու կաշեկազմը։

Եկաւ հայկական գիտութիւնը, ուզեց զբաղվել նոյն անդամահատութեամբ, ուսումնասիրութեամբ և, եւրոպացու գիտնականի տօգան հագած, սկսեց գլուխ մաշել մանր, շատ մանր հետախուզութիւններով՝ այս «ըթը» այստեղ չէ, այստեղ պիտի լինի. այն «բութը» կարեւոր չէ, այս «ն» կայ այս դարի Խորենացու ձեռագրում, չը կայ այն դարի մէջ։

Եւ այնքան նուրբ, և այնքան փաղաքշական էին այդ չանգռուածքները (царапины), որ նոյն իսկ արիւն չը հոսեց սրբած, ցամաքած Խորենացու երակներից։

Դա սխօլաստիկա էր, հայկական սխօլաստիկա։ Դա perpetuum mobile» էր։

Հայ միտքը հարիւրաւոր հատորներ է գրել, հարիւրաւոր գլուխներ գլուխ են մաշել և հազարաւոր ոսկու դրամներ անցել գնացել և ջուրը թափվել այդ perpetuum mobile-ի շուրջը։

Բայց այսօր մի գիտնական աշխատութիւն, մի հայ ինքնուրոյն միտք, հայ փոքրիկ կորիզաւոր գիտութիւն չը կայ։

Ցոյց տուէք մի աշխատութիւն, թէկուզ կրէր այս վերնագիրը՝ «Հայերի միջնադարեան աշխարհահայեցողութիւնը» և կամ հայ ժողովրդի տնտեսական վիճակը թէկուզ ամենամօտ ժամանակներում՝ XIX դարում։

Չը կայ։

Իսկ եթէ եղել են փորձեր, եթէ ոչ զուտ գիտնական աշխատութիւններ, այլ փորձեր, համարձակ տնդղումներ (зондировать), մենք թթւել, նոյնիսկ արհամարհել ենք։

Եւ հէնց այդ է, որ այսօր երբ երևան են գալիս փոքրիկ ծիլեր՝ սիմպտոմներ, որ ուզում ենք թօթափել սխօլաստիկայի ծանր լուծը և օդ շնչել, թարմանալ իսկական գիտութեան զով շնչով, ուրախանում ենք, ողջունում ենք և յոյսերով լցնում մեզ, որ կը գայ և այն օրը, որ և Խորենացին կը հագնի նոր շապիկ և ոսկելեզու Եղիշէն կը հալվի և կը զովի։

Եւ կիմանանք նրա պրօբը, իսկական արժէքը։

Բայց հայկական սխօլաստիկան, հայկական անգործ, անարիւն միտքը մուտ է գործում և դպրոց։

Ցաւալի է դա, բայց ժամանակաւոր, անցողակի երևոյթ։ Վերջին տարիները գրվեցին շատ դասագրքեր և հայոց լեզուի և զանազան գիտութիւնների վերաբերմամբ, իսկ այս տարի կատարեալ հեղեղ էր նոր և նորագոյն սիստեմով գրված դասագրքերի։

Եւ ինչ. դրանք կարկատանված և քօքլա (наметка) թելերով կարված դասագրքեր էին։

Եւ դա գիտութիւն պիտի տայ մանկան։

Կարծում են դասագիրք գրողները, որ եթէ իրանց առաջը շարեն լաւագոյն օտար դասագրքեր և այստեղից պուկ տան նրա բութը, այնտեղից սուկին, դուր կը գայ համեղ սուպ, տապակու։

Զարհուրելի թիւրիմացութիւն։ Դա հէնց նոյն րեկլամն է, որ գիլզու փաբրիկաները անում են՝ «гильзы изъ французской бумаги съ ватой Гаванна», բայց, երբ ուզում էք պապիրօս լցնել, կամ ծակվում է, կամ պատռվում։

Դասագիրքը, ինչպէս ամեն մի գրուածք, պիտի լինի կամ ինքնուրոյն մտքի արտագրութիւն կամ լաւ թարգմանութիւն։

Բնական պատմութիւն գրողը պիտի բնագէտ լինի հէնց թարգմանչի դերում։

Պատմութիւն գրողը՝ պատմագէտ։

Գլխաւորը, անհրաժեշտը գրողի աշխարհահայեցողութիւնը և համակված լինելն է այս կամ այն գիտութեամբ։

Այդ դէպքում դուք կունենաք իսկական գիտութեան արտայայտուածք և փալսիֆիկացիա կամ ալխիմիա՝ խմիրայի տեղ։

Բայց մենք իդէալիստ ենք և պղինձը՝ ոսկու, ժերտը՝ արծաթի տեղ ենք ընդունում։

Եւ այդ է պատճառը, որ մեր դպրոցներում մուծվում է ահագին քանակութեամբ գիտութեան փալսիֆիկացիա։

Մենք ունենք այսպէս թէ այնպէս հայ լեզուի լաւագոյն դասագիրք։ Դա Ղազարոս Աղայեանինն է։

Ասում եմ, որ հայ մտքի այս յուսահատական մերկանտիլիզմի միջով երևան են գալիս ծիլեր, իսկական գիտութեան սիմպտոմներ՝ որոնք հեքիաթների տեղ տալիս են համեստ, բայց իսկական մարսած գիտութիւն։

Դրանք քիչ են թւով. բայց նրանք իսկական գիտութեան ծիլեր են։ Նրանք աւետաբերներ (предвѣстники) են, թէ գիտութեան գարունը մօտենում է և հայ մտքի համար։

Յակոբ Գենջեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 15 հոկտեմբերի *)

Մասնաժողովը եկեղեցու ներքին բարեզարդութեան հոգսով նոյնպէս պակաս չէ զբաղվել։ Նրա ջանքն է եղել որքան կարելի է գեղանկար քանդակներով զարդարել եկեղեցին, որի պատճառով էլ շատ գեղարուեստագէտների է առաջարկել իրանց ծրագիրները ներկայացնելու մասնաժողովին. ներկայացված ծրագիրներից հաւանութիւն է ստացել Ֆէթվաճեանինը և դրանով էլ աւարտել գործը։ Եւ պէտք է ասել, որ կան մասնագէտներ, որ Ֆէթվաճեանի այս գործը հաւանում են, բայց և կան այնպիսիներ, որոնք անցեալ և ներկայ գեղարուեստի մի խառնուրդ են համարում նրա գործը։

Եկեղեցու ներսի կապոյտ ներկի դէմ մրագրի միջոցով բողոք բարձրացրեց միմիայն Բաշինջաղեան, բայց ոչ սրա հետ և Ֆէթֆաճեան, համարելով այն եկեղեցու անպատշաճ գոյն կամ ներկ։ Վերջինս բողոքել էր թեմ. առաջնորդին միայն այն մասին, որ իրան խոստացված գործը մասնաժողովը ուրիշի էր յանձնել։

Ճիշդ է, որ մի մասնագիտական համախորհուրդ վճռեց այդ գոյնը քանդել և դեղին քարի գոյնի վերածել, որը և յանձնվեց միայն ու միայն Բաշինջաղեանին։

Պէտք է այստեղ խոստովանել, որ թէ առաջին և թէ ներկայ գոյնը ամենքին էլ միատեսակ չեն գրաւում, և որքան էլ Ծխականը առաջինը կաֆէ-շանտան է համարում, բայց թող այնքան էլ գեղարուեստագէտ չը ձևանայ, քանի որ «ճաշակը և գոյնը» ընկեր չունեն։

Այստեղ պարտք եմ համարում նաև յայտնել, որ կապոյտ գոյնը քարի գոյնի վերածվելով, մասնաժողովը դարձեալ ոչ վնաս է հասցրել եկեղեցուն և ոչ էլ դուրս է եկել նախահաշուից։

Թող Ծխականը անհոգ լինի նաև բեմի ու խաչկալի մասին, որոնք թէև մի հանգամանքի շնորհիւ մի փոքր ձգձգվեցին, բայց և այնպէս մասնաժողովը որոշել է նախագծած ծրագրով գործն առաջ տանել, յանձնելով այն յայտնի վարպետ Անդրիօլէտտուն։ Իսկ ջահերի ծրագիրը, որ վաղուց ստացված է Ծատուրեանի միջոցով Վարշավայի մի ֆիրմայից, յանձնված է դարձեալ Բաշինջաղեանին՝ յարմարեցնելու պատերի ներկայ գոյնին։

Կարծում եմ, որ մի քանի տարուց յետոյ ես Ծխականը դարձեալ իր օտարական ընկերոջ հետ մի օր կը մտնի այս եկեղեցին ու կը սքանչանայ նրա հետ եկեղեցու արդուզարդով...

Նախահաշուով եկեղեցու շինութեան համար յատկացված է եղել ոչ թէ 50, այլ 85 հազար։ Ով ծանօթ է այսպիսի մի պատասխանատու շինութեան գործին, նա անշուշտ կը վկայի, որ այսպիսի մեծ շինութիւնների ժամանակ միշտ էլ լրացուցիչ նախահաշիւներ են կազմվում։ Եւ գուցէ այդ չը պատահէր, եթէ եկեղեցին անաջողութիւնների չը հանդիպէր։ Հէնց դրամագլուխների և կալուածների գրաւմամբ եկեղեցին ահագին կորուստ ունեցաւ. երկար ժամանակ շինութիւնը կանգ առաւ. մի քանի բաներ վնասի ենթարկվեցին. մի քանի բաներ էլ նախահաշուի մէջ չէին մտած և այլն։

Այս ամենից յետոյ թող իսկի չը ցաւի Ծխականը ապարդիւն ծախսերի մասին, քանի որ մի օտարական ճարտարապետ զարմացաւ, երբ լսեց, որ ամբողջ ծախսը նստում է մօտ 90 հազար րուբլի, և ոչ թէ աւելի—մինչև 150 րուբլի։

Ծխականը խորհուրդ է տալիս շինութեան գործը յանձնել ծխական հոգաբարձութեան, առանց յիշելու որ շինարարական մասնաժողովի մէջ են ծխական հոգաբարձուներից երեցփոխ Վարդապետեան և ճարտարապետ Կիրակոսեան։ Դուրսը մնում են միայն Արծրունի, Մելիք-Բախտամեան և Թևեան, որոնք տեխնիկային ծանօթ չը լինելով հանդերձ՝ միևնոյն ժամանակ խճճված են իրանց անձնական գործերով։

Երեցփոխ Ս. Վարդապետեան

—

Ախալքալաք, 10 հոկտեմբերի

Սեպտեմբերի 27-ին գործակալ Յովհաննէս քահ. Բաջաղնունու կարգադրութեամբ ծխական ժողով էր հրաւիրվել լսելու նախկին հոգաբարձութեան հաշուետուների զեկուցումը և հին հոգաբարձուների բացատրութիւնը այն մեղադրական կէտերի դէմ, որ հաշուետուները բարդել են նրանց վրա։

Ժողովը կայացաւ 132 ծխականների մասնակցութեամբ. ժողովականները մանրամասն ծանօթանալով զեկուցման բոլոր կէտերի հետ և լսելով հոգաբարձուների փաստալի բացատրութիւնները՝ կայացրին հետևեալ վճիռը.

1) Մենք, Ախալքալաքի Ս. Խաչ եկեղեցու ծխականներս, կարդալով 1905—8 թւականների հոգաբարձական հաշիւները քննող հաշուետուների զեկուցումը, եկանք այն եզրակացութեան, որ հաշուետուները ապօրինի են վարվել՝ հրատարակելով, առանց ծխականների թոյլտուութիւնն առնելու, իրանց զեկուցումը՝ հակառակ 1907 թ. կանոնադրութեան § 72-ի։

2) Հաշուետուները, փոխանակ նիւթական հաշիւները տեսնելու, իրանց լիազօրութիւնից դուրս նիւթերի մասին են խօսում իրանց հրատարակած բրօշիւրի մէջ։

3) Կարդալով հաշուետուների զեկուցումը, լսելով նախկին հոգաբարձութեան փաստալի բացատրութիւնները, ժողովս եկաւ այն եզրակացութեան, որ պ.պ. հաշուետուները անաչառ չեն եղել, շատ տեղ դիտմամբ ձևացել են միամիտ, շատ տեղ կեղծել և զուր տեղը զրպարտել ու անպատւել են մեր նախկին հոգաբարձութեան. դրա համար մենք յայտնում ենք նրանց մեր պարսաւանքն և մեր յարգանքն ու շնորհակալութիւնը նախկին հոգաբարձութեան։

4) Տեսնելով որ սխալ են հաշուետուների նախագահ նոր հոգաբարձու Վ. Մանանդեանի և միւս նոր հոգաբարձու Վ. Կարապետեանի ցուցմունքները այն բանի վերաբերմամբ, թէ իբր հին գանձապահը չէ յանձնել մնացորդ գումար 478 ր. 30 կ., այն ինչ նրանց գիտութեամբ և հաճութեամբ իր ժամանակին բաժանել է ուսուցիչներին 1908—9 թւակ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ռոճիկը, ժողովը վճռեց յայտնել նրանց իր անվստահութիւնը։

5) Ապա ժողովը քննելով նոր հոգաբարձուների գործունէութիւնը և գտնելով նրան անհամապատասխան դպրոցական շահերին՝ որոշեց խնդրել սրբազան առաջնորդին՝ լուծել այդ հոգաբարձական ապիկար կազմը և նշանակել նոր ընտրութիւն։

6) Տեսնելով հաշուատեսների ակնյայտնի աչառութիւնը կազմալուծել նրանց։

7) Որովհետև գործակալ հայր Յովհաննէս Բաջաղնունին ինքն էլ գործակից է այդ պարոններին, որը միշտ երևում է նրա վարմունքից, դրա համար խնդրել սրբազան առաջնորդին՝ հեռացնել նրան պաշտօնից և նշանակել նրա տեղը մի գործակալ վարդապետ։

8) Ժողովը որոշեց վերստուգիչ յանձնաժողովի՝ առանց ծխական ժողովի հաճութիւնը առնելու՝ տպագրած գրքոյկի ծախսը յանձն չառնել։

9) Թոյլ տալ նախկին հոգաբարձութեանը տպագրել իր բացատրութիւնները և մեր այս ժողովի վճիռները առանձին բրօշիւրով և ցրել ժողովրդի մէջ։

10) Այս մեր վճիռը տպագրել տալ հայկական թերթերում։

Նախագահ՝ Խորէն Մեծատունեան
Քարտուղար՝ Յովհաննէս Դաբբինեան

—

Բագու, 12 հոկտեմբերի

Քաղաքացիական պարտականութիւն ենք համարում հրապարակ հանել մի զզւելի վարմունք, որը թոյլ է տուել իրան Բագուի ս. Լուսաւորիչ եկեղեցու միաբան՝ ճեմարանաւարտ Ներսէս քահ. Տէր-Կարապետեանը։ Ամսիս 4-ին, կիրակի, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ եկեղեցու գաւթում Ներսէս քահ. Տէր-Կարապետեանը՝ փողոցային սրիկաներին յատուկ հայհոյական դարձուածքներով յարձակվում է նոյն եկեղեցու միաբան Ղևոնդ աւ. քահ. Տէր-Աստուածատրեանի վրա, թէ ինչու վերջինս այդ օրը հանգուցեալ տ. Լալայեանի թաղման ծիսակատարութեան մասնակցելու համար իրան ևս չէ հրաւիրել։ Տէր-Ղևոնդը փորձում է բացատրել, որ ինքը, իբրև ծխատէր քահանայ, վարվել է հանգուցեալի տիրոջ կարգադրութեամբ, տէր Ներսէսն ևս առաւել փրփրում ու կատաղում է, լուտանքներ թափում և թքում տէր-Ղևոնդի երեսին, սպառնալով մինչև անգամ փայտով հարուածելու։

Ղևոնդ աւ. ք. Տէր-Աստուածատրեանը խիստ վիրաւորված Տէր-Կարապետեան քահանայի արարքից՝ գրաւոր գանգատ է ներկայացրել թեմակալ առաջնորդին, խնդրելով քննութիւն նշանակել և յանցաւորին խստիւ պատժել։

Ներսէս ք. Տէր-Կարապետեանը իր սխրագործութիւններով յայտնի է Բագուում։

Մեր համեստ կարծիքով թէ հոգևոր իշխանութիւնը և թէ ծուխը՝ յանձին ծխական մարմինների՝ պիտի զբաղվեն եկեղեցու պաշտօնեաների բարեկարգութեան խնդրով։ Եթէ ծխականները՝ դատ-դատ իրանց առօրեայ հոգսերով զբաղված լինելու պատճառով՝ միջոց ու հնարաւորութիւն չունեն եկեղեցու ներքին բարեկարգութեան վրա հսկելու, թւում է եկեղեցական ծխ. հոգաբարձութիւնը ի պաշտօնէ պարտաւոր է զբաղվել այդ խնդիրներով և հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրել վերացնելու եկեղեցու պաշտօնեաների միջև նկատված թերութիւնները։ Եթէ եկեղեցական պաշտօնէութիւնը անհրաժեշտութիւն է նկատվում, ապա ուրեմն նրա կազմը բարելաւելու պահանջը հրամայական պիտի համարել։ Բաւական է, որքան եկեղեցին զանազան բաղդախնդիր և շահամոլ անձանց շահատակութեանց ասպարէզ դարձաւ։ Ամեն ինչ վախճան պիտի ունենայ։ Մենք հոգևոր իշխանութեան լուրջ ուշադրութիւնն ենք հրաւիրում քահանայական դասի թէ որակի և թէ քանակի կարգաւորման խնդրի վրա։

Ծխական

—

Շուշի, 14 հոկտեմբերի

Գր. Զալխուշեանի նամակի տպաւորութեան տակ անշուշտ հայ մանուկները իրանց ծնողներից փող կը խնդրեն օգնութեան հասնելու Ադանայի 10,000 հայ մանուկներին։ Ես էլ ղարադաղցի հայ մանուկ եմ, ծնողս բերել է Շուշի, որ գրել-կարդալ սովորեմ, այնպէս որ ես լաւ պայմաններում եմ, բայց ծնողս այնքան չէ աշխատում, որ նրանից փող խնդրէի Ադանայի որբերի օգտին։ Յիսուն կոպէկ ունէի, որ Թիֆլիս գնալու ժամանակ Հիւրը խանումն էր տուել։ Այդ 50 կոպէկից 10 կ. եկեղեցում մոմ եմ վառել և աղօթել Աստուծուն, որ Ռահիմ խանի ոյժերը ջլատի, որ նա չը կարողանայ յարձակվել մեր գիւղի վրա ու կոտորել մեր գիւղացիներին, որոնց թւում իմ թանգագին մօրս, քրոջս և եղբայրներիս։ Փառք Աստուծոյ, որ այդ չեղաւ մինչև օրս, այնպէս որ իմ ունեցած 50 կ. դուրս գալով ծախսածս 10 կ. և հանելով պօստի ծախքը, ուղարկում եմ խմբագրութեանդ յօգուտ որբերի 26 կ. պօստի մարկաներով։

Գրիգոր Յ. Մելքումեանց

—

Թիֆլիս, 19 հոկտեմբերի

Յուլիսի 21-ին «Մշակի» 156-րդ համարում մի լուր էր տպված, որի մէջ յայտնըվում էր, որ իմ համագիւղացի՝ Աշտարակի բնակիչ Յարութիւն Վարդազարեանցը բողոքել է ոստիկանութեան, որ իր 18 տարեկան որդին, Ալէքսանդրոպոլի առևտրական դպրոցի V դասարանի աշակերտ Տիգրան Վարդազարեանցը, Աշտարակի պօստ-հեռագրատանից ստանալով իր անունով փոխադրված 700 րուբլին, եկել է Թիֆլիս, հանդիպել այստեղ ինձ և իմ եղբայր Եսայի Արամեանցին և մեզ հետ միասին, գնացել է գինետուն կոնծաբանելու։

Տիգրանը իբր մեզ յայտնած է եղել, որ իր մօտ 700 րուբլի կայ, որը կարված է անդրավարտիկում. և որպէս թէ կոնծաբանութիւնից յետոյ Տիգրան Վարդազարեանցը եկել է մեր տունը քնելու, իսկ առաւօտը արթնանալով նկատել է, որ 700 րուբլին չը կայ, որի պատճառով էլ մենք կասկածվում և բանտարկվում ենք։

Պարտք եմ համարում յայտնել այս մասին, որ Եսայի Արամեանցը իմ եղբայրը չէ, նա միայն ինձ շատ հեռու ազգական է։

Ես երբեք չէի կարող երևակայել, որ երբևիցէ այդպիսի բանտարկութեան մէջ կընկնեմ։

Ճիշդ է՝ որ այդ դէպքի առիթով մի օր ժամանակով բանտարկվել ենք. գործը դատարան մտաւ և մենք միանգամայն արդարացանք, անմեղ դուրս եկանք։

Արդարանալուց յետոյ ես արդէն բողոքել եմ դատարանին ինձ հասցված վիրաւորանքի համար պատիւս վերականգնելու։

Գրիգոր Արամեանց

—

Նոր-Բայազէտ, 14 հոկտեմբերի

Նոր-Բայազէտի ծխ. դպրոցների հոգաբարձութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը այրի տ. Թագուհի Բիւրքչեանին, որը դպրոցների սուղ միջոցները աչքի առաջ ունենալով ինքնակամ նուիրեց դպրոցին 50 ր.։

Նախագահ հոգաբարձութեան՝
Հայկ-Արամ Տէր-Միքայէլեան
Անդամ-Քարտուղար՝
Վահրամ Յակոբեան

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ Ա. Ա.-ԻՆ*)

—

Ի ցաւ Ա. Ա.-ի պիտի ասեմ, որ ընդհակառակը՝ ես բաւական երկար ժամանակ ուսուցչութիւն եմ արել մեր ծխական դպրոցներում ու բացի դրանից վերջին տարիների ընթացքում յատկապէս զբաղված եմ մեր տարրական դպրոցների համար ընդգծած բնական գիտութիւնների ծրագրի ուսումնասիրութեամբ, որի արդիւնքը շուտով հնարաւորութիւն պիտի ունենամ ներկայացնել հայ ընթերցող հասարակութեան. այդ պատճառով թոյլ եմ տալիս ինձ կարծել, որ մեր տարրական դպրոցների սաների մտաւոր զարգացման աստիճանին և յիշեալ ծրագիրներին ես աւելի մօտից եմ ծանօթ, քան Ա. Ա.-ն կարծում է և թելադրում է հայ հասարակութեան։ Բայց որ ինքը Ա. Ա.-ն չարաչար սխալ է ըմբռնում յիշեալ ծրագիրն ու նրա ոգին, այդ արդէն ակներև է։ Ինչպէս երևում է, պարոնը, բաց անելով տարրական դպրոցների համար սահմանված ծրագիրների գրքոյկը, տեսել է, որ բնական գիտութիւնների տախտակի առաջին սիւնակում գրված են մարդն ու կենդանին, երկրորդում՝ բոյսը և միայն երրորդում, չորրորդում և հինգերորդում՝ անկենդան աշխարհի բաժանումները, և այդ պատճառով էլ կարծում է, թէ հէնց մարդուց ու կենդանիներից էլ պիտի սկսել բնական գիտութիւնների ուսուցումը։

Բայց նախ այդ տախտակը Հռոմի պապի կօնդակը չէ, և եթէ նրա մէջ սխալներ կան (և այդպիսիները քիչ չեն), պիտի ուղղել և ոչ կուրօրէն հետևել նրան։ Եւ երկրորդ՝ եթէ Ա. Ա.-ն գէթ մի անգամ խօսած լինէր յիշեալ տախտակը կազմողի հետ, այդ դէպքում նրանից էլ կը լսէր, որ նախ՝ օդի, ջրի և երկրի մասին պիտի հասկացողութիւն տալ երեխաներին և ապա կենդանիների ու բոյսերի։ Մեզ համար շատ հետաքրքրական է իմանալ, թէ ինքը Ա. Ա.-ն բնական գիտութիւնների ուսուցիչ լինելով Բամոյեանց դպրոցում, ինչպէս է բացատրում իր սաներին մարդու շնչառութիւնը, առանց նրանց նախօրօք հասկացողութիւն տալու օդի, թթուածնի, ածխաթթուտի և այրման երևոյթի մասին. կամ ինչպէս է բացատրում նրանց օդից և ջրից բոյսերի սնունդ առնելը։ Չէ՞ որ կենդանի բնութեան հետ ծանօթացնելիս ուսուցիչը իւրաքանչիւր քայլափոխում հանդիպում է այդպիսի հարցերի, որոնց բացատրութիւնը ամբողջովին անկենդան բնութեան հետ ծանօթ լինելու մէջ է ամփոփւում։

Ա. Ա.-ն ասում է, որ այդ բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնները նա հաղորդում է իր աշակերտներին դեռ առաջին և երկրորդ բաժանմունքներում. երջանիկ են պարոնի աշակերտները։

Վերջապէս «Բնագիտութեան» և «Բնական պատմութեան» գաղափարների իմաստը ինքը Ա. Ա.-ն է սխալ ըմբռնում և խառնում, որը առաջ է գալիս դարձեալ նրա ռուսերէնին լաւ չը տիրապետելուց։ Պարոնը ռուսաց «естествѣдѣніе» բառը հայերէն «բնագիտութիւն» բառով է թարգմանում և միևնոյն ժամանակ կարծում է, թէ այդ գաղափարը բնութեան միայն անկենդան աշխարհն է ընդգրկում։ Բայց եթէ նա աւելի մօտից ծանօթ լինէր բնական գիտութիւններին, այն ժամանակ կիմանար, որ естествовѣдѣніе (ուրեմն և բնագիտութիւն) ասելով հասկանում են թէ անկենդան և թէ կենդանի աշխարհները։ Օրինակ՝ եթէ նա բաց արած լինէր իր յօդուածում յիշված Սեվրիւկի կամ պրօֆ. Վագների դասագրքերը, որոնցից առաջինը կրում է «Начальный курсъ естествовѣдѣнія», իսկ երկրորդը՝ «Начальный курсъ природовѣдѣнія» անունները, կը տեսնէր, որ երկուսի նիւթն էլ դասաւորված է ճիշդ այնպէս, ինչպէս իմ գրքիս մէջ, այսինքն նախ անգործարանաւոր կամ անկենդան աշխարհը՝ օդը, ջուրը և երկիրը, և ապա կենդանի աշխարհը՝ մարդը, կենդանին և բոյսը։ Ռուսաց լեզուով естествовѣдѣніе, природовѣдѣніе և естественная исторія բառերը միշտ գործ են ածվում միևնոյն իմաստով, մէկը միւսի փոխարէն, և արտայայտում բնութեան ուսումնասիրութիւնը, բնութեան ուսուցումը, բնութեան ճանաչելը, գիտենալը։ Այդ բառերի տեղ հայերէն լեզուով մենք կատարեալ իրաւունք ունենք գործածել՝ թէ բնական պատմութիւն, թէ բնագիտութիւն (որը սխալմամբ ֆիզիկա խօսքի տեղ են գործ դնում) և թէ բնապատմութիւն բառերը։ Դրանք բոլորն էլ թէ իրանց բառակազմութեամբ և թէ իմաստով միևնոյն միտքն են արտայայտում։

Վերջացնելով խօսքս չեմ կարող կանգ չառնել մի բնորոշ կէտի վրա։ Մեր գրախօսը, անցնելով Սարգսեանի դասագրքին, ցաւ է յայտնում, որ վերջինը իր գրքի «Կենդանիներ» բաժնի մէջ յիշում է միայն կենդանային թագաւորութեան տիպարների մասին և «ոչ մի բացատրութիւն չէ տալիս կենդանական թագաւորութեան ստորաբաժանումների մասին՝ ինչ է կարգ, դաս, տիպար, ընտանիք» և այլն։

Տարրական դպրոցներում բնական գիտութիւնները անցնելիս պիտի ոչ մի վերացական բան չասել և ամեն կերպ խուսափել այդպիսի գաղափարներին մօտենալուց։ Իսկ քննադատի յիշած գաղափարներն այնքան վերացական են, որ դժուարամարս են նոյնիսկ միջին դպրոցի աշակերտների համար։ Այդ բանը շատ գեղեցիկ կերպով հասկացել են թէ մեր տարրական դպրոցների համար ծրագիր կազմողները, որոնք այդպիսի ոչ մի բան չեն դրել իրանց կազմած ծրագրի մէջ, և թէ Սարգսեանը։ Տ. Գիւզալեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ

—

Ֆերրերի ողբերգական սպանումից յետոյ եւրոպական հասարակութիւնների արտայայտած բուռն ցասումը, ինչպէս յայտնի է, տապալեց Մաուրայի պահպանողական-կղերական մինիստրութիւնը։

Մինիստրութեան անկման լուրը մեծ խնդութեամբ ընդունեց Մադրիդի հասարակութիւնը։ Ասում են, թէ շատ պանդոկներում գինին ձրի էին բաժանում յաճախորդներին։ Փողոցներում, թատրոններում սարքվում էին հակակղերական մեծամեծ ցոյցեր։ Ազատ զգաց իրան և թագաւոր Ալֆօնսը. երկար փակ կեանք վարելուց յետոյ, նա բաց կառքով զբօսանքի դուրս եկաւ։

Նոր դահլիճը, «Matin»-ի ասելով, կանգ է առել այս ծրագրի վրա. վերականգնել սահմանադրական ապահովութիւնները Բարսելօնայում և այն տեղերում, որտեղ դրանք վերացված էին։ Շնորհել ընդհանուր ներում բոլոր քաղաքական և տպագրական գործերով մեղադրեալներին։ Հրատարակել Ֆերրերի գործին վերաբերեալ բոլոր վաւերաթղթերը։ Աշխատել վերջացնել Աֆրիկայի պատերազմը։ Նշանակել մօտերումս պարլամենտական նոր ընտրութիւններ։

Նոր պրեմիերն անձամբ յայտնել է ֆրանսիական թերթի թղթակցին, որ կառավարութիւնն ամեն ջանք կը գործադրի, որպէսզի երկիրը շուտով մոռանայ Մաուրայի մինիստրութեան օրերը։

Ֆրանսիական կառավարութիւնը, ամենից շահագրգռվածը սպանական գործերում, մեծ ուրախութեամբ ընդունեց ազատամիտ մինիստրութեան նշանակումը։ Եւս առաւել, որ Մօրէտը և արտաքին գործոց մինիստրը մօտիկ բարեկամներ են Պիշօնին՝ ֆրանսիական արտաքին գործոց մինիստրին։

Սակայն ընդհանուրի կարծիքն այնքան էլ լաւատես չէ սպանական դրութեան մասին։ Նոր պրեմիեր Մօրէտը նոր մարդ չէ կառավարչական գործերում։ Նա բազմիցս անգամ եղել է մինիստրական պաշտօններում և երկու անգամ կրել է պրեմիերի կոչումը։ Այժմ Մօրէտը 72 տարեկան է, յայտնի է որպէս աչքի ընկնող փաստաբան։ Մօրէտը չափաւոր ազատամիտ է և միապետութեան կողմնակից։ Նրա ծեր հասակը շատերի համար կասկածելի է դարձնում մինիստրական դահլիճի աջողութիւնը՝ ներկայ յուզված օրերին։ Նշանակալից է և այն հանգամանքը, որ աչքի ընկնող ազատամիտ պետական գործիչներ չը համաձայնվեցին ընդունել Մօրէտի առաջարկած մինիստրական պորտֆէլները, որ բացատրվում է նրանով, թէ ազատամիտ գործիչները յոյս չեն տածում ներկայ դահլիճի յարատևութեան։

Թէ վերին, թէ ժողովրդական պարլամենտներում գերիշխում է կղերական-պահպանողական մեծամասնութիւնը, որի վրա յենվել չէ կարող ազատամիտ մինիստրութիւնը։ Ուրեմն նոր ընտրութիւններն անխուսափելի են. պիտի արձակել ներկայ կորտեսները։ Միայն նոր ընտրութիւնների հետևանքը կը պատկերացնէ երկրի իսկական կարծիքը, որից յետոյ պետական ղեկին կը հրաւիրվեն կամ ազատամիտ-արմատականները, կամ պահպանողականները, նայած գերիշխող մեծամասնութեան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պարսկաստանի պարբերական մամուլի մասին ահա ինչ է գրում մեր հայրենակից Առաքել Դերվիշը «Ран. Утро»-ում։

«Մահմեդ-Ալի շահի գահընկէցութիւնից յետոյ, Պարսկաստանում երևացին բաւականաչափ նոր լրագիրներ արմատական ուղղութեամբ, որոնցում խստօրէն քննադատվում էր նոր կառավարութեան ամեն մի քայլը։ Սակայն նախկին «յեղափոխականներին»՝ Սիփեհդարին և Սարդար-Ասադին այնքան էլ հաճելի չէր արմատական մամուլի քննադատութիւնը և նրանք, իբրև խրատ միւսների համար, փակեցին «Շարք» (Արևելք) թերթը։ Այդ ժամանակ փակված թերթի խմբագիր Սէյիդ Ջիան հետևեալ կոչը ուղղեց թէհրանի ընթերցող հասարակութեան. «Քաղաքացիներ, մենք սարսափով պիտի հաստատենք այն փաստը, որ Պարսկաստանում մինչև օրս էլ թագաւորում է կամայականութիւնը և միահեծանութիւնը («Իստիբդադ»)։ «Շարք» լրագիրը, որի նպատակն էր՝ ներկայացնել իբրև արդարութեան հայելի, փակված է, որովհետև մի քանի մինիստրներին ցանկալի չէ ճշմարտութիւնը։ Մեր մինիստրութեան շահերը ներհակ են ճշմարտութեան և իմ թերթը փակել են առանց դատաստանի և քննութեան, առանց նոյնիսկ ինձ նախազգուշացնելու։ Եթէ յիրաւի Իրանում գոյութիւն ունի սահմանադրութիւնը, եթէ դուք, միահեծանութիւնից մեզ ազատողներդ, պաշտպան էք խօսքի ազատութեան, եթէ դու, պարսիկ ժողովուրդ, քո մէջ ունես առաջադիմութեան ցանկութիւնը, այդ ժամանակ դուք չի պիտի ծածկէք այն կեղտը, որ կուտակվել է մեր երկրում և ժողովուրդը պիտի ճանաչէ իր մինիստրներին։ Իսկ եթէ մամուլը պիտի նորից լռէ, այն ժամանակ երկրում կը սկսվի կրկին կամայականութիւն և մենք մեր ապագայի հետ կընկղմվենք խաւարի մէջ»։

«Այս կոչը լոյս տեսնելուն պէս՝ դատապարտված թերթի խմբագրութիւնը այցելեց ինքը՝ Սարդար-Ասադը, ներողութիւն բերեց կառավարութեան կողմից և խնդրեց շարունակել լրագրի հրատարակութիւնը»։

«Եւ սա կատարվում է Պարսկաստանում, որի սահմանադրութիւնը մի քանիսների կարծիքով «միայն տարաձայնութիւն է»,— աւելացնում է Ա. Դերվիշը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Զինուորական գլխաւոր դատարանում քննվեց Նովօրօսիյսկի հանրապետութեան գործը։ Դատարանը փոխեց դատավճիռը և գործը յանձնեց երրորդ անգամ քննելու։

---

*) Տես «Մշակ» № 230.

*) Տես «Մշակ» № 231.

Մայրաքաղաքում խոլերայով հիւանդացան 18, մեռան 4 հոգի. հիւանդների թիւը 211 է։

Մինիստրների խորհրդում շուտով քննւելու է տաժանակիր աշխատավայրերի վերակազմութեան հարցը։ Արդարադատութեան մինիստրութիւնը նախագծում է վերացնել գոյութիւն ունեցող տաժանակիր աշխատանքների հաստատութիւնները, հաստատել նորերը յատուկ բանտերում, դարձնել տաժ. աշխ. ամենապակաս ժամանակամիջոցը վեց տարի և այլն։

Մինիստրների խորհրդի քննութեան ներկայացվեց կայսերական համալսարանների նոր կանոնադրութեան նախագիծը։

ՆԻԿՕԼԱԵՎՍԿ։ Ձերբակալվեց խունխուզների խմբակը։

ՄՕՍԿՎԱ։ Վախճանվեցին առողջապահութեան յայտնի պրոֆէսօր Բունիօվը և Մոսկվայի կայսերական օպերայի նախկին ռեժիսեօր Ստերլիգօվը։

ՍԱՐԱՏՕՎ։ Իրինօվկում այրվեցին 29 շինութիւններ 11 հազար պուդ հացով։ Սարատովի գաւառի Լիպօվկի մօտերը այրվեց 100 դեսեատին անտառ. կրակն անցաւ գիւղացիական բանկի անտառային ամարանոցը։

ՀՌՕՄ։ Երէկ առաւօտեան Բրաչչիանօում տեղի ունեցաւ զինւորական օդապարիկի թռիչքը Նէապօլ գնալու համար։ Օդապարիկը Նէապօլ եկաւ ժամը մէկ և կէսին և մի քանի պտոյտներ կատարելով քաղաքի վրա, իջաւ Հռոմի վրա գիշերվայ ժամը 1-ին։ Օդապարիկի մեկնելու ժամանակ լէյտենանտ Րօզզէտին հասարակութեան հրելու ժամանակ ընկաւ տրորվող պտուտակի մէջ և այն աստիճան ջարդուածքներ ստացաւ, որ հիւանդանոց տանելիս մեռաւ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պոստատար գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.։ Մարդատար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.։ Խառն գնացք չորրորդ կարգի վագօններով, միայն ըստ հարկի կարևորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ։ Մարդատար գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պոստատար 1 ժ. 37 ր. գիշ., Ալեքսանդրոպոլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.։ Մարդատար ապրանքատար՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալեքսանդրոպօլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնր այլ ևս չէ գնում։ Խառն գնացք չորրորդ կարգի վագօններով ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալեքսանդրոպօլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.։ Պոստային՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.։ Մարդատար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պոստատար գնացքը 8 ժ. 42 ր. երեկ., մարդատար № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., մարդատար № 11՝ 10 ժ. 47 ր. առ.։ Վերջին գնացքը չէ գնում Բաքում։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պօստային՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդատար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին։ Վերջին գնացքը Բագու չէ գնում։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պոստատար 6 ժամ 19 ր. առ., մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 44 ր. երեկոյեան։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագօններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ։

Բ Ժ Ի Շ Կ

Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։

Կուկնիեվսկայա փ., № 6, «Վէտցէլ» հիւրանոցի մօտ։ (Ե. Հ. Շ.) 955. 100—15

Բ Ժ Ի Շ Կ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։

Ընդունելութիւն ամեն օր { 12—1 ժ. առաւ.
5—6 ժ. երեկ.

Միքայէլեան փող., № 36, տ. Ծամծամիձէի։
(օ. մ.) 100—27

Բ Ժ Ի Շ Կ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. $12^1/_2$—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 9—11.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—15

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Ներքին և ջղային հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—7

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

Ս. Ա. ՑԷՅՏԼԻՆ

Ատամների և բերանի խոռոչի հիւանդութիւններ։ Արհեստական ատամներ։
Ընդունել. առաւ. ժ. 9-ից—երեկ. ժ. 7-ը։ Միքայէլեան պր. տ. № 22. (Անկիւն Սեմեօնօվսկայա փ. № 3), մուտքը Սեմեօնօվսկայա փողոցից։
(օ.մ.) 810. 100—25

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ

Փոխադրվել է նոր բնակարան՝ Գօլօվինսկի պրօսպէկտ, տ. Դօբրժանսկու, № 18.
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը ամեն օր (առ. 10—12 ժ.
(երեկ. 6—7 ժ.
(օ. մ.) 1063. 10—8

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ

ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ

Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթթումն, դեղերի քսումն (втираніе) և այլն։ Էլեքտրականութիւն ռեվմատիզմի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Ընդունելութիւնը 3—4 ժամը։ Семеновская ул., № 9, Վօրօնցօվի կամուրջին մօտ։
(օ. մ.) 857. 0—20

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!!

2 ր. 75 կ.։

Ուղարկում ենք վերարկուի մի «Տրիումֆ» չէվիօտը, $4^1/_4$ արշ., տղամարդկանց հագուստի համար։ Չը նայած չափազանց էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր յատկութիւնները ամենալաւ կտորների—մի անգամայն ամուր, ձեռնտու և շքեղ է։ Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց ճանապարհածախքը մեր հաշւին։ Պահանջները հասցէագրել՝ Въ фабрику Т—ва „ЭХО“, г. Лодзь, № 15.

Թղթակցութիւնները ռուսերէն լեզւով։

(Հ.Կ.) (В. 58110) 947. 0—9

ԵՂԲ. ԱՎԱՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ

այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի մրգատու ծառեր ու դեկորատիվ բոյսեր։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.). Կատալօգը ուղարկվում է ՁՐԻ։
(Հ. Կ.) 1105. 15—1



ԿԱՆԱՆՑ հաւատարիմ բարեկամ

ԿՐԷՄ ԿԱԶԻՄԻՐ

ՄԵՏԱՄՕՐՖՕԶԱ

Ծախված է մօտ ԵՐԿՈՒ միլիօն բանկա
ԱՐՄԱՏԱԿԱՆԱՊԷՍ ոչնչացնում է
ՊԷՊԷՆՆԵՐԸ, ԲՇՏԻԿՆԵՐԸ, ԲԾԵՐԸ,
ԽՈՐՇՈՄՆԵՐԸ և ԵՐԵՍԻ ԱՅԼ ԴԷՖԷԿՏՆԵՐԸ։

Հաստատ. Աւետրի և Մանուֆակտ. Դէպարտ. № 4683 գրութեամբ։

(1,11,21, Ն. 1,11) (П. 130191) 1004. 5—3

ԿՈՉ

Բացառիկ հանգամանքները ստիպում են Փօթու հայոց եկեղեցու շինութեան Հոգաբարձութեանս խոնարհաբար դիմել բոլոր բարեսէր և բարեգործ ազգայնոց՝ ըստ չափու կարողութեան և ցանկութեան օգնել Փօթու հայոց եկեղեցու շինութեան։ Ահա 10 տարի է, որ Փօթիում չը կայ ոչ միայն եկեղեցի, այլ և մի աղօթատուն, և տեղիս հայերը, աւելի քան 800 հոգի, գլխաւորապէս բանւորներ, իսպառ զրկված են հոգևոր ու բարոյական սնունդից։ Իսկ սրանց զաւակները՝ դպրոց չը լինելու պատճառով՝ դէն էին շպրտված։ Հոգաբարձութիւնս իր ընտրված օրից ահա չորրորդ տարին է՝ չը խնայելով ոչ մի ջանք՝ աշխատում է ի կատար ածել իր ստանձնած գործը և հանգանակում է նուէրներ եկեղեցու և ուսումնարանի շինութեան համար։ Մեր դիմումը անուշադիր չը մնաց զգայուն և բարեսէր անձանց կողմից, որոնց նուիրաբերած գումարի մի մասով հոգաբարձութիւնս կառուցեց ուսումնարանի շինութիւնը, որը 1908 թւականի յունվարի 8-ից բացված է և ուր ուսանում են ձրի երկու սեռի հայ մանուկներ, իսկ մնացեալ գումարով ձեռնարկել է մի փոքր, համեստ եկեղեցու շինութեան, որի պատերը կէսից աւելի արդէն բարձրացված են. սակայն, դժբաղդաբար, վերջացաւ հանգանակած գումարը, իսկ անհրաժեշտութիւն է նկատվում մինչև ձմեռվայ վերահասը բարձրացնել ամբողջովին պատերը և կամարները և ծածկել տանիքը, այլապէս տեղական կլիմայական աննպաստ պայմաններից և ձմեռային մշտական անձրևներից կը փչանան բոլորովին եղածն էլ և դրա հետ միասին՝ թէ պատւարժան բարեգործ անձանց նուիրաբերութիւնը և թէ Հոգաբարձութեանս ամբողջ 4 տարվայ աշխատանքը։ Հոգաբարձութիւնս ոչ ֆիզիքական և ոչ էլ բարոյական ոյժ ունի անհանգստացնելու միեւնոյն բարեգործ և կարեկից անձանց, որոնք ձեռք մեկնելով՝ օգնութեան հասան այս մեծ գործում, ինչպիսին է ժողովրդի մութ խաւերի լուսաւորութիւնը եկեղեցու և ուսումնարանի միջոցով. բայց կարիքը, դառն և անյետաձգելի կարիքը ստիպում է նորից ձեռք կարկառել և օգնութիւն հայցել։ Ո՜վ բարի մարդիկ, օգնեցէք վերջացնելու հայ ժողովրդի վեհութեան և պարծանաց տաճարը։ Իւրաքանչիւր մի լումայ, իւրաքանչիւր մի կոպէկ խորին անկեղծութեամբ և շնորհակալութեամբ կընդունվի, որը և իր ժամանակին կը յայտարարվի կովկասեան լրագիրներում։ Խոնարհաբար խնդրում ենք նուիրաբերութիւններն ուղարկել Փօթի՝ հայոց եկեղեցու Հոգաբարձութեան։

Նախագահ Հոգաբարձութեան՝
Անդրէաս Ապրէեան
Գանձապահ և քարտուղար՝
Ա. Թիւրքեան
(Հ.) 1108. 4—1

Լոյս տեսաւ

„ՓՈԹՈՐԿԻՑ ԱՌԱՋ“

Վէպ Աբիսողոմ Յովհաննիսեանի
Գինն է 1 րուբլի։
Դիմել՝ Թիֆլիս, գրավաճ. «Գուտտենբերգ»

Նոյն տեղը վաճառվում է

„ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ և ԶԵՄՍՏՎՕ“

Բէլօկօնսկու, թարգ. Կ. Ջալալեանի
Գինը 15 կոպէկ։
Կարելի է ուղարկել և պօստային մարկաներ։
Գրացուցակը ուղարկվում է ՁՐԻ։
(Հ. Շ.) 1111. 2—1

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են

Երգեցողութիւն ս. պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ փոխադրեալ և դաշնագրեալ յերիս ի չորիս ձայնս ի ձեռն Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ, գինն է 8 ր.։

(Alto) երգեցողութիւն ս. պատարագի վասն քառաձայն խառն խմբի (ի զգեստաւորին քահանայի), գ. 1 ր. 50 կ.։

(Basso) երգեցողութիւն ս. պատ. վասն եռաձայն արական խմբի (ի զգեստաւորին քահանայի), գ. 2 ր.։

(Soprano) երգեցողութիւն ս. պատ վասն քառ. խառն խմբի (ի զգեստ. քահ.), 1 ր. 50 կ.։

(Tenore) երգեցող. ս. պատ. վասն եռաձ. արական խմբի (ի զգեստ. քահ.), 2 ր.։

Դիմել՝ Въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ. 854 (Հ.) 10—9

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ

30 ՄՇՏԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՎ ԵՒ ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

Կուկնիեվսկայա փող. № 7, սեփ. տ., «ՎԷՑԵԼ» հիւրանոցի մօտ։

◆ Տէլէֆօն № 590 ◆

Հիւանդներին ընդունում են հետևեալ մասնագէտ բժիշկները։

ԲԱԼԱՐՋԵՎ Լ. Ի.—երեխաների հիւ., ամէն օր, բացի կիրակի օր., 2—3 ժ. ցեր.։
ԳԱՄԲԱՇԻՁԷ Վ. Դ.—ներքին եւ երեխ., ամէն օր, բացի կիրակի օր., 11—12 ժ. ցեր.։
ԳԵԴԵՎԱՆԻ Մ. Ա.—ջղային եւ էլեքտր., երկուշ., չորեքշ., ուրբաթ, $10^1/_2$—11 ժ. առ.
ԳՈՒՐԿՕ Ա. Գ.—ներքին, շաբաթ՝ 1—2 ժ., կիրակի՝ 11—12 ժ.։
ԿԱՐՇԻՆ Ա. Ա.—կաշուի եւ վեներ., ամէն օր, բացի կիրակի օր., $2^1/_2$—$3^1/_2$ ժ. ցեր.։
ՄԱՂԱԼՕՎ Գ. Գ.—ներքին, երեքշ. և շաբաթ, 10—12 ժ. առ.։
ՄԱՆՈՎԼԷՍՕՎ Վ. Մ.—ներքին, երկուշ., հինգշ. և շաբաթ, 1—2 ժ. ցեր.։
ՄԵԼԻՔՕՎ Ն. Մ.—վիրաբուժ. եւ կանանց, ամէն օր՝ 12—1 ժ. ցեր.։
ՄՈՒՍԽԷԼՕՎ Վ. Ս.—աչքի, երկուշ., չորեքշ. և ուրբաթ, 2—$2^1/_2$ ժ. ցեր.։
ՓԻՐԱԴՕՎ Ր. Բ.—վիրաբուժ., ամէն օր՝ 11—12 ժ. առ.։
ՊՕՊՕՎ Բ. Ս.—ականջի, կոկորդի եւ քթի, ուրբաթ, 2—$2^1/_2$ ժ. ցեր.։
ՐՑԽԻԼԱՁԷ Ն.—ատամի, ամէն օր՝ 9—10 ժ.
ՍՕԲՕԼԵՎՍԿԻՅ Գ. Վ.—վիրաբուժ., ամէն օր՝ 10—11 ժ. առ.։
ՏԻԿԱՆԱՁԷ Ի. Ե.—կանանց եւ մանկաբ., ամէն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ՖԷՕԴՕՐՕՎ Ե. Գ.—միկրօսկոպ., քիմիական և բակտէրիօլոգ. վերլուծումներ։

1017. 100—18

ՎՕԿԶԱԼՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ

Երթևեկ հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնֆիաջեանցի

Տ է լ է ֆ օ ն 695

Ս. ՎԱՇԱԿՄԱՁԷ ատամնաբոյժ, ամեն օր, 9—10 ժ. առ.։
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։
ԴԻԱՍԱՄԻՁԷ սիֆիլիս, վեներ. եւ կաշուի հիւ. ամեն օր, $11^1/_2$—$12^1/_2$ ժ.
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ., 1—2 ժամը։
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ, ամեն օր 12—1 ժ. բացի կիրակի օրերից, կոկորդի քթի և ականջի։
Վ. Ս. ՄՈՒՍԽԷԼՕՎ, երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը, 1—$1^1/_2$ ժ., աչքի հիւանդ.։
Ն. Գ. ՖԷՕԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 11—12 ժ., ներքին և երեխայոց հիւանդ.։

Հիւանդանոցում կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կոպէկ։ 1032. 100—16

Ներսիսեանաւարտ

և

ԳԻՄՆԱԶԻԱՒԱՐՏ

Երկու երիտասարդ որոնում են

ՌՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՊԱՇՏՕՆ

հայոց ծխական դպրոցներում։
Տեղեկութիւնների համար դիմել «Մշակի» գրասենեակին։
(ա. օ.) 1105. 3—3

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

Վաճառվում է

Աշոտ Երկաթ, պատ. վէպ, գինը 1 ր.
Հիւսիսի արծիւ, պատ. վէպ, գինը 1 ր.
Սեւ յաղթանակ, վէպիկ . . . » . 50 կ.

Մնում են շատ քիչ օրինակներ։ Միանգամից գնողը ստանում է շատ մեծ զեղչ։ Դիմել հեղինակին՝ Сурпъ-Нишанская ул. № 11, Баграту Айвазянцу.
(Կ. Հ. ու.) 1103. 3—2

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ „ԿԱՎԿԱԶ“ ՀԻՒՐԱՆՈՑ

Երևանեան հրապարակ, տ. Միրզօյեանի, տէլէֆօն 358.

◆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ◆

Անպայման մաքրութիւն, անդորրութիւն և հանգստութիւն, էլէքտրական լուսաւորութիւն, տէլէֆօն և վաննաներ։ 50 համարներ՝ 1 րուբ. սկսած։ Քաղաքավարի և շուտափոյթ սպասաւոր ծառայողներ։

◆ Պ. պ. վօյաժօրներին և ամսով վարձողներին մեծ ԶԵՂՋ ◆

◆ ՄԵՆԻՒ ◆

I. ճաշ՝ 2 կեր.՝ 60 կ., 1 ր. օղի և 1 ր. գինի։ II. ճաշ՝ 3 կեր.՝ 75 կ., 1 ր. օղի, 1 ր. գինի, 1 թաս սուրճ։ III. ճաշ՝ 4 կեր. 1 ր., 1 ր. օղի, կէս շ. գինի և 1 թ. սուրճ։ IV. ճաշ՝ 5 կեր. 1 ր. 50 կ., 1 ր. օղի, կէս շ. գ. և 1 թ. սուրճ։

Յարգանքով Ի. Կօչիլյա և Ն. Սիխարուլիձէ
(օ. մ.) 870. 100—23

ՁԿՆԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂ Ս. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

Պուշկինսկայա փող., տ. Սանդուխեանցի № 23, ռուսաց սեմինարիայի հանդէպ

ՏԷԼԷՖՕՆ № 395



ՏԷԼԷՖՕՆ № 395

Ամեն օր անընդհատ ստացվում են օսէտրինա, սէվրիւգա, լասօսինա և հատիկաւոր խաւեար, նոյնպէս և ձկնեղէն-մթերքներ։ Վաճառվում են բարեխիղճ գներով։
Յարգանքով Ս. Ղուկասեան
(օ. մ.) 919. 20—19

---

200 ՌՈՒԲԼԻ ՆՈՒԷՐ ԵՆՔ ՏԱԼԻՍ



ով կապացուցի, թէ մեր ապրանք չէ համապատասխանում գնին. 12 ր. տեղ 3 ր. 95 կ. ուղարկում ենք 17 անհրաժեշտ արժէքաւոր իր. 1) սև պողպ. ժամ. անկէր կամ կանանց ցիլինդ., 40 ժ. մէկ առանց բանալիի լարվող ժամ., 8 տարվայ երաշխաւոր. 2) գեղեցիկ, չը սևացող շղթայ. 3) նոյնպիսի բրէլօկ. 4) զամշի պարկ, ժամ. փչանալուց պահելու. 5) կաշուի նորաձև քսակ 6 բաժ. 6) շահաւէտ նորոյթ—ամերիկակ. անվտանգ «Սանիտա» ածելի, որով ամեն ոք կարող է անվնաս և շատ հեշտ սափրվել. 7) սափրվելու վրձին. 8) նիկէլի թաս. 9) ածելին սրելու փոկ. 10) գեղ. զուգէ մատանի «Օպալ» քարով. 11) Պարիզի նորոյթ «Պլաստօգ», որը բնականօրէն ցոյց է տալիս զանազան տեսարաններ. 12—17) 6 հատ հետաքրքրաշարժ նկարներ «Պլաստօգի» համար։ Այս բոլոր իրերն ուղարկում ենք միայն 3 ր. 95 կ., 2 գարնիտ. 7 ր. 40 կ., պատուէրն ստանալուն պէս, վեր. վճ. և առանց կանխավճ.։ Նոյնպիսի գարնիտ., աւելի լաւ մեխանիզմ ժամաց. 4 ր. 50 կ. 2-ը 8 ր. 50 կ.։ Յիշեալ գարնիտուրը փակ ժամացոյցով՝ 1 ր. թանկ։ Ճանապ. 40 կ. (Սիբիր 75 կ)։ Հասցէն՝ Т-во ЗАРЯ Варшава.

Խնդրում ենք հասցէն կտրել և պահել ծրարի երեսին։
(В. 63520) 1019. 11—3

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Ի նկատի ունենալով, որ վաճառքի է հանված առողջութեան համար վնասակար կեղծ Սպերմին, որ առաջարկվում է զանազան անունների տակ, անհրաժեշտ է գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել հետևեալ անուան վրա՝

ՍՊԵՐՄԻՆ ՊԷԼԻ

ՊՐՕՖԷՍՍՕՐ-ԴՕԿՏՕՐ

SPERMINUM POEHL 1901

և պահանջել այդպիսին Գործարանաբուժական Ճեմարանի իսկական կապոցի մէջ,
ՊՐՕՖԷՍՍՕՐ-ԴՕԿՏՕՐ ՊԷԼԻ և ՈՐԴԻՔ, ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Ռուսական և արտասահմանեան գրականութեան մէջ եղած բազմաթիւ գիտական դիտողութիւնները առաջնակարգ գիտականների և բժիշկների կողմից՝ Սպերմինի փրկարար ներգործութեան մասին—նեվրաստենիա, սեռական թուլութիւն, ծերութիւն, իստերիա, նեվրալգիա, արեան պակասութիւն, թոքախտ, սիֆիլիս, սնդիկային բժշկութեան հետևանքներ, յօդացաւ, սրտի հիւանդութիւններ (չաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախումն, պերեբօյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումն, ալկօհօլիզմ, ողնաշարի հիւանդութիւն, կաթուածներ, հիւանդութիւններից թուլացումն, յոգնածութիւն և այլ հիւանդութիւններ ունեցած ժամանակ—

ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ԲԱՑԱՌԱՊԷՍ ՊՐՕՖ.-ԴՕԿՏ. ՊԷԼԻ ՍՊԵՐՄԻՆԻՆ։

ՊԷԼԻ ՍՊԵՐՄԻՆԸ գտնվում է բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում. 1) կաթիլների ձևով (Essentia spermini—Poehl), 1 սրուակը—3 ր., և նոյնպէս՝ 2 ամպուլլաների մէջ մորթու տակ սրսկելու համար (Sperminum-Poehl pro injectione), 1 արկղիկը—4 անգամ սրսկելու համար—3 ր. և 3) կլիզմի համար (Sperminum-Poehl pro clysm), 1 արկղիկը—4 կլիզմի համար—3 րուբլի։

Ձրիաբար ուղարկվում է „Целебное дѣйствіе Спермина-Пеля“ գիրքը 102 էջ. որ պարունակում է ռուս և այլազգի բժիշկների դիտողութիւնները, նոյնպէս և „Органотерапевтическій Сборникъ“ երկրորդ հրատար. գիրքը՝ պրօֆէսսօր-դօկ. Պէլի ցուցմունքներով գործարանային ուրիշ կազմ. վերաբերմամբ։—Ըստ պահանջման պ. պ. բժիշկների ուղարկվում է գիտական յատուկ գրականութիւն։

Органотерапевтическій институтъ, химическая лабораторія и аптека

Профессора Доктора ПЕЛЯ и Сыновей

въ С.-ПЕТЕРБУРГѢ. Вас. Остр., 7 линія, д. 18—267.

Ամենախոշոր մրցանակներ «Grand Prix» աշխարհիս բոլոր ցուցահանդէսներում և ամենալաւ գովասանքներ բժշկականութեան մէջ գործող հեղ. անձերի։
(П. 108276) 720. 8—4

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская № 2.